



ՏԱՐԱԾՈՎԱՆԱԿԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԹՐԱՆՍՓԱՐԵԼՄԻ ԻՆԹԵՐՆԵՑՍԼ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ԱՌՋՈՐ-ԺԱՅԻԱՅԻ

ԸՆԿԱԼՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2006



© 2006 Միավորված ազգերի զարգացման ծրագրի հայատանյան գրասենյակ



Սույն հրապարակումը պարտադիր չէ, որ արտացոլի Միավորված ազգերի զարգացման ծրագրի տեսակետները:



**ՏԱՐԱԾԱՇԽԱՎԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Հասցե՝ ՀՀ, Երևան 0010  
Նալբանդյան փ. 5, սեն. 38  
Հեռախոս՝ (374 10) 585 578, 526 914  
Ֆաքս՝ (374 10) 585 578  
Էլ.հասցե՝ crd@transparency.am  
Ինտերնետ կայք՝ [www.transparency.am](http://www.transparency.am)

Ձեսպորտը և հրատարակումը՝ «Մատիտ» դիզայն ստուդիա / [www.matit.am](http://www.matit.am)

ՀԱՐՑՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ .....	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ .....	4
Կոռուպցիայի մակարդակը Հայաստանում .....	4
Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը.....	5
Հայաստանի միջազգային պարտավորությունները.....	7
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ.....	8
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Մեթոդաբանություն.....	33
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հարցաթերթ.....	37
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Պատասխանների համադրում ըստ սեռի.....	45
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Պատասխանների համադրում ըստ տարիքի .....	49
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Պատասխանների համադրում ըստ կրթության .....	53
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Պատասխանների համադրում ըստ զբաղվածության .	58
ՀԱՎԵԼՎԱԾ 7. Պատասխանների համադրում ըստ եկամտի.....	66
ՀԱՎԵԼՎԱԾ 8. Պատասխանների համադրում ըստ բնակավայրի.....	71
ՀԱՎԵԼՎԱԾ 9. Պատասխանների համադրում ըստ վարչատարածքային բաժանման.....	75
ՀԱՎԵԼՎԱԾ 10. Վերջին երեք տարվա ընթացքում կատարված ոչ պաշտոնական վճարումները .....	84



# ՀԱՐՑՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Կոռուպցիայի ընկալման վերաբերյալ սույն հարցումն իրականացվել է 2006թ. օգոստոս ամսին Հայաստանի ողջ տարածքում «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինքնուրենցմենտ-Հայաստան» (ՏԶԿ/ԹԻ-Հայաստան) հասարակական կազմակերպության կողմից՝ Միավորված ազգերի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: Ուսումնասիրությունն իրականացվել է հնարավորություն ընձեռնելու երկրի բնակչությանը արտահայտել իր կարծիքը կոռուպցիայի վերաբերյալ, բացահայտել արորենմային ոլորտները, մատնանշել կոռուպցիոն դրսևորումները և առաջարկել կոռուպցիայի դեմ պայքարի հնարավոր միջոցները: Ակնկալվում է, որ հարցման արդյունքների հրապարակումը կնպաստի այս թեմային վերաբերող հասարակական քննարկումների ակտիվացմանը և պետական պաշտոնյաների, գործարարների, քաղաքացիական հասարակության, դոնոր կազմակերպությունների ներդրման ապահովմանը՝ ծևավորելու Հայաստանում առավել արդյունավետ հակառակություն:

Տվյալների համարումը ապահովելու նպատակով հարցաթերթը մշակվել է 2002թ. ՏԶԿ/ԹԻ-Հայաստանի կողմից կոռուպցիայի ընկալման ուսումնասիրության ընթացքում օգտագործված հարցաշարի հիման վրա: 2006թ. ընտրանքը ներառել է 1 500 պատահականորեն ընտրված տնային տնտեսություն: Հարցման վիճակագրական սխալը կազմել է 2.6%: Ընտրանքը համանասնորեն բաշխվել է Հայաստանի բոլոր մարզերի և Երևան քաղաքի 12 թաղային համայնքների միջև՝ ընդգրկելով 31 քաղաք և 40 գյուղ:

Հարցման արդյունքները ցույց են տվել, որ կոռուպցիան դեռևս շատ է մտահոգում հայաստանցիներին: Հարցման մասնակիցների ավելի քան կեսը կոռուպցիան որակել է որպես հանցագործություն կամ անբարոյականություն: 2002թ. համեմատ 2006թ. գրեթե 5 անգամ ավելի շատ հարցվող է նշել, որ կոռուպցիան միշտ էլ եղել է Հայաստանում: Հարցվողների մեծամասնությունը համոզված է, որ կոռուպցիայի նակարդակն աճել է վերջին երեք տարվա ընթացքում:

Ինչպես 2002թ., այնպես էլ 2006թ. հարցման մասնակիցների մեծ մասը համարում է, որ կոռուպցիայի հիմնական դրսևորումը կաշառակերությունն ու պաշտոնեական դիրքի չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով: 2006թ. հարցվողները կրկին նշել են, որ կոռուպցիայի տարածմանը հիմնականում նպաստում են պետական պաշտոնյաները, և որ ավելի շատ կոռուպցիա առկա է Հայաստանի կառավարման համակարգի բարձր մակարդակում:

2002թ. համեմատ փոխվել է առավել կոռումպացված պետական ինստիտուտների (կառույցների) վերաբերյալ հարցի պատասխանների բաշխումը: Եվ թեև 2006թ. կրկին մատնանշվել է դատախազությունը, բայց «Վարչապետի աշխատակազմ» և «Դատարաններ» պատասխանները փոխարինվել են «Վարչապետ» և «Նախարարներ» տարբերակներով: 2002թ. հարցման մասնակիցներին առաջարկվել էր թվարկված պետական կառույցներից ընտրել երեք առավել կոռումպացվածները, սակայն նրանք դժվարացել են (կամ հրաժարվել են) դա անել: 2006թ. հարցվողները օգտվել են այդ հնարավորությունից և ընտրել «Նախագահ», «Վարչապետ» և «Նախարարներ» պատասխանները որպես առաջին, երկրորդ և երրորդ «կարգի» առավել կոռումպացված ինստիտուտներ:

Ինչ վերաբերում է առավել կոռումպացված ոլորտներին և ծառայություններին, պետավոտեսչությունը շարունակում է համարվել շատ կոռումպացված ոլորտ: Բացի այդ, հարցվողների մեծ մասը որպես ամենակոռումպացված մատնանշել է ընտրական համակարգը և հարկային ծառայությունը, մինչեւ 2002թ. որպես այդպիսին նշվել են բանակը և առողջապահությունը: 2006թ. կրթությունը և առողջապահությունը պետականությունը հետ մեկտեղ գրադեցրել են առաջին, երկրորդ և երրորդ տեղերը երեք առավել կոռումպացված ոլորտների և ծառայությունների շարքում:

2006թ. հարցումը բացահայտել է նոր ոլորտներ, որոնցում կատարվել են ոչ պաշտոնական վճարումներ: Դրանք են իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, օտարերկրյա դեսպանատները, բնապահպանության առնչվող ծառայությունները, համատիրությունները և քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը՝ ի հավելում առողջապահության, կրթության, պետավոտեսչության, հարկային, մաքսային և անշարժ գույքի կադաստրի ծառայությունների, բանակի, տեղական ինքնակառավարման մարմինների, նոտարական գրասենյակների, որոնք նշված են եղել 2002թ.:

Եթե 2002թ. հարցման մասնակիցների մեծամասնությունը պատասխանել է, որ կոռուպցիայի հիմնական պատճառներն են օրենքների ոչ արդյունավետ կիրառումը, անկատար օրենսդրությունը և վերահսկողական մեխանիզմների ու պատժամիջոցների կիրարկման բացակայությունը, ապա 2006թ. հարցվողների ավելի մեծ թիվ հակված էր Հայաստանում կոռուպցիայի հիմնական պատճառների շարքին դասելու նաև հասարակության հանդուրժողականությունը:

2006թ. մեծ թվով հարցվողներ ասել են, որ իրենք ընդհանրապես չեն արդարացնում կոռուպցիան, ինչը տարբերվում է 2002թ. արտահայտած կարծիքից և կարող է համարվել դրական միտում: Մեկ այլ

դրական միտում է այն, որ ավելի շատ մարդ պատասխանել է, որ իրենք կաշառք չեն վերցնի, որովհետև դա անընդունելի է իրենց համար, և ավելի քիչ մարդ՝ որ կվերցնեն, քանի որ բոլորը վերցնում են:

Համաձայն 2006թ. հարցման արդյունքների՝ հասարակությունը տեղյակ չէ Հակակողուացոյն ռազմավարության, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և դրան կից Մոնիթորինգի հանձնաժողովի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների մասին: Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վերաբերյալ հարցին 2006թ. հարցվածների նույնքան մասը, ինչքան և 2002թ., պատասխանել է, որ այն մասամբ արդյունավետ է, և համարյա նույնքանը՝ որ այն արդյունավետ չէ:

2006թ. հարցվողների մեծամասնությանը մտահոգել է կոռուպցիայի բացասական ազդեցությունը Հայաստանի իշխանությունների լեգիտիմության և հասարակության մեջ առկա բարոյական մթնոլորտի վրա, ինչը տարբերվում է 2002թ. պատասխաններից: Հարցվողների մեջ մասը նշել է, որ կոռուպցիայի հետ կապված ներկա իրավիճակի համար պատասխանատվություն են կրում երկրի նախագահը, կառավարությունը, Ազգային ժողովը, իրավապահ մարմինները և դատարանները:

Ներկա իրավիճակի բարելավմանն ուղղված լուծումներն առաջնահերթության կարգով դասելիս՝ ուսումնասիրության նաև կիցների մեծամասնությունը մատնանշել է ազատ և արդար ընտրություններ ապահովելու անհրաժեշտությունը: Որպես երկրում կոռուպցիան նվազեցնելուն նպատակառուղիված կարևորագույն նախապայմաններ նրանք նշել են նաև օրենքի կիրառման ապահովումը և կոռուպցիայուն ներգրավվածներին պատժելը: Ինչպես 2002թ., այնպես էլ 2006թ. հարցվողների գգալի մասը համոզված էր, որ երկրի նախագահը կարող է որոշիչ դեր ունենալ Հայաստանում կոռուպցիայի նվազեցման գործում: Միևնույն ժամանակ շատերը կրկին կարում են, որ շարքային բաղաքացիները ոչինչ չեն կարող անել:

Երկրում կոռուպցիան հաղթահարելու հնարավորության վերաբերյալ հասարակական կարծիքը չի փոխվել 2002թ. համեմատ: Հարցվողների մոտ մեկ երրորդը կրկին ասել է, որ կոռուպցիան չի կարող վերանալ, մոտավորապես կեսը նշել է, որ այն կարող է սահմանափակվել որոշ չափով, և միայն մեկ հինգերորդի կարծիքով այն կարող է գգալիորեն նվազեցվել:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

### Կոռուպցիայի մակարդակը Հայաստանում

Կոռուպցիան պաշտոնի չարաշահումն է ամձնական օգուտ ստանալու նպատակով: «Ըստ կանոնների» կոռուպցիան դրսևորվում է, եթե պետական պաշտոնյան անձնական օգուտ է ստանում իր՝ օրենքով սահմանված պարտականությունները կատարելու համար, այսինքն՝ մի բանի համար, որը պահանջվում է համապատասխան օրենսդրությամբ: «Ընդդեմ կանոնների» կոռուպցիան տեղ է գտնում, եթե պետական պաշտոնյան օգուտ է ստանում մի ծառայության համար, որն ինքը իրավունք չունի մատուցելու, և դրանով խախտում է օրենքը:

Կոռուպցիան դրսևորվում է տարբեր ձևերով և ընդգրկումներով ու կարող է «վարակել» հասարակության բոլոր հիմնական ինստիտուտներն ու արժեքները, ինչն իր հերթին բացասարար է անդրադառնում երկրի քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացման վրա: Շարքային բաղաքացիներն իրենց առօրյա կյանքում կարող են բախվել փոքր ծավալի կամ «մանր» կոռուպցիայի հետ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են պետականութեաչությունը, կրթությունը, առողջապահությունը և այլն: Մեծ ծավալի կամ «խոշոր» կոռուպցիան հասարակության համար պակաս տեսանելի է և ավելի դժվար բացահայտվող. դրանում սովորաբար ներգրավված է բաղաքական և տնտեսական վերնախավը: «Խոշոր» կոռուպցիան տեղ է գտնում հանրային գնումների, միջազգային օգնության օգտագործման և այլ ոլորտներում: Վերոհիշյալ օրինակները վերաբերում են վարչական կոռուպցիային, իսկ քաղաքական կոռուպցիայի դասական օրինակներ են ընտրողներին և ընտրական հանձնաժողովների անդամներին տրվող կաշառքները և ընտրությունների ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումը:

«Թրանսփարենսի ինքերնեշնլ» (ԹԻ) կազմակերպության 2006թ. կոռուպցիայի ընկալման համարվի (ԿԸՇ)<sup>1</sup> համաձայն ուսումնասիրության ենթարկված 163 երկրների ցանկում Հայաստանը գտնվում է 3.0-ից ցածր ԿԸՇ ունեցող երկրների շարքում (ըստ «10 - 0» սանդղակի, որտեղ «10»-ը ամենամարդուր երկրի համարիվն է, իսկ «0»-ն՝ ամենակոռումացվածին): Վերջին երեք տարվա ընթացքում Հայաստանում չի արձանագրվել որևէ առաջընթաց և երկրի ԿԸՇ-ը 2004, 2005 և 2006 թվականներին համապատասխանաբար կազմել է 3.1, 2.9 և 2.9:

2005թ. Գործարար միջազգային և ծեռնարկատիրական գործունեությանը վերաբերող

<sup>1</sup> [http://www.transparency.org/policy\\_and\\_research/surveys\\_indices/cpi](http://www.transparency.org/policy_and_research/surveys_indices/cpi)

հետազոտության արդյունքների համաձայն կոռուպցիան Հայաստանում դարձել է գործարարությունը խոչընդոտող ավելի լուրջ հիմնախնդիր 2002թ. համեմատությամբ<sup>2</sup>: Հարցման ենթարկված ընկերությունների հավաստնամբ՝ թեև կաշաք վերցնելու հաճախականությունը նվազել է, դրա ընդհանուր գումարի բաժինը տարեկան հասույթի մեջ 2005թ. աճել է, մինչդեռ նախկին կոմունիստական այլ երկրներուն այն նվազել է: Հարցման մասնակիցների կարծիքով ոչ պաշտոնական վճարներ առավել հաճախ կատարվում են պետական պատվերներ ծեռք բերելու, ծեռնարկատիրական գործունեության իրականացման արտոնագրեր և թույլտվություններ ստանալու, հանրային ծառայությունների (էլեկտրականություն և հեռախոս) բաժանորդագրվելու և սպասարկում ստանալու, հարկային պարտավորություններ կատարելու ժամանակ, ինչպես նաև՝ աշխատանքի անվտանգության, առողջապահության, հակահրդեհային, քաղաքաշինական և բնապահպանական վերահսկողական մարդինների, ինչպես նաև մաքսային ծառայության (ապրանքների ներմուծման հետ կապված) և դատարանների հետ առնչվելու ընթացքում: Հարցմանը մասնակցած ընկերությունները նաև մատնանշել են, որ առավել աճել է տնտեսական վերնախսավի ազդեցությունը նոր օրենսդրության բովանդակության, ընթացակարգերի և որոշումների վրա, կամ, այլ կերպ սասած, ավելացել են պետության «զավթման» դրսերումները:

Ըստ «Ֆրիդոն Հառլե» կազմակերպության կողմից 2006թ. հրատարակված «Անցումային երկրները» գեկույցի<sup>3</sup> Հայաստանում կոռուպցիայի մակարդակը չի փոխվել կառավարման ոչ մի մակարդակում: 1999թ. ի վեր երկրի կոռուպցիայի համարիվը մնացել է անփոփոխ՝ 5.75 (ըստ «1-7» սանդղակի, որտեղ «1»-ը նշանակում է «բացարձակ մաքուր», իսկ «7»-ը՝ «բացարձակ կոռումպացված»): «Գելափի 2006թ. կոռուպցիայի համարիվ» ուսումնասիրության համաձայն Հայաստանը գրադերել է 82-րդ տեղը 101 դիտարկված երկրների շարքում ու դասվել որպես 69-րդը (ամենափոքր արժեքը ցույց է տալիս, որ թիվ հավանական է, որ բնակչությունն ընկալի կոռուպցիան որպես տարածված երևույթ, իսկ ամենաբարձր արժեքը համապատասխանաբար արտացոլում է դրա մեջ հավանականությունը):<sup>4</sup>

Համաշխարհային Բանկի՝ վերջերս հրապարակած «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում (Երրորդ հաշվետվություն)» Ո՞վ է հասել հաջողությունների...և ինչո՞ւ» գեկույցն ընդգծել է, որ, չնայած Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացնան միջոցառումների ծրագրի մշակմանը 2003թ. և Կոռուպցիայի դեմ պայքարի բարձրաստիճան խորհրդի ստեղծմանը 2004թ., իրավիճակը Շայաստանում, կոռուպցիայի բազմաթիվ բաղադրիչների առումով, 2005թ. դարձել է ավելի վատ, քան 2002թ.<sup>5</sup>:

**Դակակորուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը**

Վերոհիշյալ Յակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառությունների ծրագիրը վերջնական տեսքի են բերվել և հաստատվել 2003թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված կուսակցությունների կառավարության կողմից: Յայտնաբերությունը որդեգրել է մի մոտեցում, որը նպատակատար է բարելավելու հաճապատճական օրենսդրությունը և ամրապնդելու գործող իրավապահ մարմինները: Յատուկ իրավական կամ ընթացակարգային մեխանիզմներ կոռուպցիոն հանցագործությունների քննության և քրեական հետապնդման համար գործություն չունեն: Կոռուպցիոն հանցագործությունների մեջ մասը, ինչպիսիք են կաշառակերությունը, պաշտոնեական դիրքի չարաշահումը, կեղծիքը և այլն, հետաքննության են ենթարկվում դատախազության կառույցների կողմից: 2004թ. ապրիլին ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծվել է Կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ բաժին՝ հաճակարգելու դատախազության, ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության կոռուպցիոն հանցագործությունների քննության հետ կապված գործողությունները:

Դայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը ներառված են մեկ փաստաթղթում: Ռազմավարության նպատակը կոռուպցիայի հաղթահարումն է, դրա պատճառների վերացումը, երկրում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորումը, որն իր հերթին պետք է նպաստի ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության և իրավական պետության հաստատմանը, ազատ տնտեսական մրցակցությանը, տնտեսական զարգացմանը և աղքատության նվազեցմանը<sup>6</sup>:

Ըստ Հականոռուացին օսպմավարության, Հայաստանում կռուացիայի դեմ պայքարի հիմնական միջոցներն են օրենքի գերակյալության վրա հիմնված պետական արդար կառավարման

<sup>2</sup> <http://www.info.worldbank.org/governance/beeps>

<sup>3</sup> <http://www.freedomhouse.hu/nit.html>

<http://www.galluppoll.com/content/?ci=25612&pg=1>

<sup>5</sup> «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրություն (Երրորդ հաշվետվություն)». Ո՞վ է հասել հաջողությունների... և ինչո՞ւ». Յանձնախառիկային ռանմ., 2006թ., էջ 63.

<sup>6</sup> «Հայաստանուածին բազմապորական և ոռու հորանանացան միջոցագործենուի ծովահո», Եղվան, 2003, էջ 5-6

համակարգի ստեղծումը, կոռուպցիոն գործողությունների բացահայտումն ու կոռուպցիայի մեջ ներգրավված անձանց պատասխանատվության ենթարկելը և հանրային իրազեկության խթանումն ու պետական պաշոնյաների վարչագործի կանոնների ու էթիկայի նորմերի մշակումն ու կիրառումը<sup>7</sup>: Միջոցառումների ծրագիրը ներառում է մոտ 100 միջոցառում և ենթամիջոցառում<sup>8</sup>: Միջոցառումների մեջ մասը (44) առնչվում է տնտեսական ոլորտին, 7-ը՝ քաղաքական ոլորտին, 13-ը՝ հանրային կառավարմանը, 7-ը իրավապահ մարմններին և 10-ը՝ դատական համակարգին: Միջոցառումների ժամանակաշրջանը մեծամասնությունը իրականացվել է 2003թ. դեկտեմբերից մինչև 2006թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում:

2004թ. հունիսին ստեղծվել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և դրան կից Սոնհուրինգի հանձնաժողով՝ աջակցելու հայաստանի կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը<sup>9</sup>: Խորհրդի նախագահն է ՀՀ վարչապետը, իսկ անդամներն են ՀՀ Ազգային ժողովի փոխնախարարը, ՀՀ կառավարության աշխատակազմի դեկավարը, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ գլխավոր դատախազը, ՀՀ նախագահի հակակոռուպցիոն հարցերով խորհրդականը (2006թ. հունիսից ի վեր այս պաշտոնը զբաղեցնում է ՀՀ նախագահի օգնականը<sup>10</sup>), ՀՀ կենտրոնական բանկի նախագահը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահը, ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահը և ՀՀ նախագահի վերահսկողական ժառայության պետը:

Խորհրդի հիմնական գործառույթներն են՝ համակարգել Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հետ կապված գործողությունները, քննարկել Սոնհուրինգի հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկները, վերլուծել հակակոռուպցիոն միջոցառումների պատասխանատու կատարողների գործունեությունը, կազմակերպել և համակարգել նախարարությունների հակակոռուպցիոն ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Սոնհուրինգի հանձնաժողովը դեկավարում է ՀՀ նախագահի ներկայացուցիչը (նախկինում՝ խորհրդականը, ներկայում՝ օգնականը): Սյուս անդամներն են Եվրոպական երկրների կոռուպցիայի դեմ պայքարի խմբում (GRECO) ՀՀ պատվիրակության դեկավարը, Պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քարտուղարը, ՀՀ կառավարության աշխատակազմի ներկայացուցիչը, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի խմբակցությունների և խմբերի ներկայացուցիչները: Հասարակական ոլորտը ներկայացնում է ՏԶԿ/ԹԻ-Հայաստան կազմակերպության և Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցության և խմբի կողմից մեկ տարի ժամկետով առաջարկված մեկական հասարակական կազմակերպության (ՀԿ) ներկայացուցիչները: Քանի որ ընդդիմադիր «Արդարություն» և «Ազգային միարանություն» խմբակցությունները բոլորում են Սոնհուրինգի հանձնաժողովի գործունեությունը, վերջինիս կազմում բացակայում են 4 անդամ (2-ական ներկայացուցիչ ընդդիմադիր խմբակցություններից և նրանց կողմից առաջարկվելիք ՀԿ-ներից):

Սոնհուրինգի հանձնաժողովի գործառույթներն են՝ մոնիթորինգի ենթարկել հակակոռուպցիոն ռազմավարության և նախարարությունների հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումն՝ դրանուն ներառելով քաղաքացիական հասարակության կառույցներին և զանգվածային լրատվամիջոցներին, ուսումնասիրել և ամփոփել հակակոռուպցիոն ոլորտում միջազգային ու տեղական փորձը, մոնիթորինգի ենթարկել ՀՀ կողմից ստորագրված և վավերացված հակակոռուպցիոն միջազգային կոնվենցիաներից բխող՝ ՀՀ միջազգային պարտավորությունների կատարումը, և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի վերհանման նպատակով իրականացնել օրենքների ու իրավական այլ ակտերի նախագծերի փորձագիտական վերլուծություն<sup>11</sup>:

Հանձնաժողովը հավաքում է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրություն (տես՝ 2005թ. տվյալները ՀՀ կառավարության ինտերնետային կայքում<sup>12</sup>) և հետևում Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի կատարմանը՝ հիմք ընդունելով պատասխանատու պետական կառույցների կողմից ստացված տվյալները: Հայաստանի կողմից ստորագրված և վավերացված հակակոռուպցիոն կոնվենցիաներից բխող միջազգային պարտավորությունների կատարումը ստուգելիս նույնականացնելու հաշվի են առնվորմ համապատասխան պետական մարմինների հաշվետվությունները: 2005թ. Սոնհուրինգի հանձնաժողովին կից ծևավորվել է ՀԿ-ների ներկայացուցիչներից բաղկացած տասներկու աշխատանքային խումբ, որոնք սակայն չեն գործել 2006թ. ընթացքում: Նմանապես, 2006թ. տեղի է ունեցել կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի միայն 3 և Սոնհուրինգի հանձնաժողովի՝ միայն 2 հանդիպում:

<sup>7</sup> «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր». Երևան, 2003, էջ 15-18

<sup>8</sup> Նույնը, էջ 51-68

<sup>9</sup> ՀՀ նախագահի 2004թ. հունիսի 1-ի թիվ ՆՀ-100 հրամանագիր

<sup>10</sup> ՀՀ նախագահի 2006թ. հունիսի 21-ի թիվ ՆՀ-144-Ն հրամանագիր

<sup>11</sup> ՀՀ նախագահի 2004թ. հունիսի 1-ի թիվ ՆՀ-100 հրամանագիր

<sup>12</sup> [http://www.gov.am/armversion/premier\\_2/pdf/prog\\_d\\_2.pdf](http://www.gov.am/armversion/premier_2/pdf/prog_d_2.pdf)

## **Հայաստանի միջազգային պարտավորությունները**

Հայաստանը Ենթակա է միջազգային մոնիթորինգի՝ գնահատելու իր կողմից ստանձնած միջազգային հակակոռուպշիոն պարտավորությունների կատարման գործընթացը: 2004թ. հունվարին երկրը դարձել է GRECO-ի անդամ<sup>13</sup>, իսկ 2004թ. հունիսին և դեկտեմբերին, համապատասխանաբար, ստորագրել և վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Քրեական իրավունքի մասին» և «Քաղաքացիական իրավունքի մասին» հակակոռուպշիոն կոնվենցիաները: Հայաստանը նաև ներգրավվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD)՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպշիոն գործողությունների պլան» ժրագրում<sup>14</sup>:

Հայաստանի մասին GRECO-ի առաջին գեկույցն ընդունվել է 2006թ. մարտին: Այն ներառել է Հայաստանի կառավարության կողմից հակակոռուպշիոն միջոցառումների արդյունավետության գնահատման առաջին և երկրորդ փուլերի արդյունքները: Զեկույցը նշել է, որ Հայաստանում կոռուպշիան «...լուրջ իիմնախնդիր է, որը բացասաբար է ազդում հանրային ծառայության շատ ոլորտների վրա»<sup>15</sup>, և տվել է 24 երաշխավորություն (առաջարկություն)՝ ուղղված կոռուպշիայի դեմ պայքարի ոլորտում առկա իրավիճակի բարելավմանը<sup>16</sup>: 2007թ. սեպտեմբերի 30-ը սահմանվել է որպես GRECO-ի առաջարկությունների իրականացման վերջնաժամկետ:

GRECO-ի առաջարկությունների մեծամասնությունը կանխարգելող և բացահայտող բնույթի են և իիմնականում (24 առաջարկությունից՝ 20-ը) նպատակառուղղված են օրենքների և ընթացակարգերի ընդունմանն ու բարելավմանը: Վեց առաջարկություն վերաբերում են հանրային ծառայողների և առողջապահությունների վերապատրաստմանը, մեկով առաջարկվում է համապատասխան ուսումնասիրությունների իրականացում՝ բացահայտելու կոռուպշիայի և դրա դրսևորումների առավել անբողջական պատկերը Հայաստանում, իսկ մյուսը կարևորում է հակակոռուպշիոն միջոցառումների և դրանց իրականացման արդյունքների վերաբերյալ հանրության կանոնավոր իրազեկման անհրաժեշտությունը:

OECD-ի «Ստամբուլի հակակոռուպշիոն գործողությունների պլան» ներառում է Հայաստանը, Ադրբեյջանը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ուկրաինան: Այն կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպշիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով: Հայաստանին վերաբերող առաջարկությունները մշակվել և ընդունվել են 2004թ. հունիսի 15-18-ին Փարիզում կայացած հանդիպմանը: Հայաստանի կառավարությունը OECD-ի հակակոռուպշիոն ցանցի քարտուղարությանը պարբերաբար գեկուցում է առաջարկությունների կատարման գործընթացի վերաբերյալ: Երկրի գեկույցները ներկայացվել են 2004թ. դեկտեմբերին, 2005թ. հունիսին ու հոկտեմբերին և 2006թ. հունիսին ու դեկտեմբերին:

OECD-ի 24 առաջարկությունները դասակարգված են երեք խմբերում. 1) «Ազգային հակակոռուպշիոն քաղաքականություն և ինստիտուտներ» (7 առաջարկություն). 2) «Օրենսդրություն և կոռուպշիայի քրեականացում» (8 առաջարկություն). 3) «Քաղաքացիական ծառայության թափանցիկություն և ֆինանսական վերահսկողություն» (9 առաջարկություն): OECD-ի 1-ին, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 17-րդ և 20-րդ առաջարկությունները ամբողջովին կամ մասամբ համընկնում են GRECO-ի համապատասխան առաջարկությունների հետ: 2006թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած OECD-ի մոնիթորինգի 6-րդ հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի առաջնթացը 2004թ. առաջարկությունների կատարման գործում և ընդունվել երկրի գնահատման (մոնիթորինգի) գեկույցը: Զեկույցն ընդգծել է մի շարք դրական միտումներ, սակայն նաև նշել է, որ իրականացված միջոցառումներից շատերը միայն առաջին քայլը են կոռուպշիայի նվազեցման ճանապարհին և որ դեռևս մեծ աշխատանք է պահանջվում թերևսացնելու կոռուպշիայի «բեռը» հանրային և տնտեսական կյանքի տարրեր ոլորտներում<sup>17</sup>:

2005թ. մայիսին Հայաստանը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպշիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիան (UNCAC)<sup>18</sup>, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հոկտեմբերին: UNCAC-ն հիմքեր է ստեղծում աշխարհով մեկ կոռուպշիայի դեմ պայքար ծավալելու համար: Կոնվենցիան անդրադառնում է կանխարգելիչ միջոցառումներին, կոռուպշիայի քրեականացմանը և օրենքների կիրառմանը, միջազգային համագործակցությանը, ակտիվների վերականգնմանը, տեխնիկական աջակցությանը և տեղեկատվության փոխանակմանը, ինչպես նաև կոնվենցիայի դրույթների իրականացման մեխանիզմներին: 2006թ. դեկտեմբերին Յորդանանում կայացած՝ UNCAC-ը վավերացրած պետությունների առաջին հանդիպմանը որոշվել է սահմանել

<sup>13</sup> <http://www.greco.coe.int>

<sup>14</sup> <http://www.oecd.org/corruption/acn>

<sup>15</sup> <http://www.greco.coe.int/evaluations>

<sup>16</sup> Նույնը

<sup>17</sup> [http://www.oecd.org/document/35/0.2340,en\\_2649\\_34857\\_37846947\\_1\\_1\\_1,1.00.html](http://www.oecd.org/document/35/0.2340,en_2649_34857_37846947_1_1_1,1.00.html)

<sup>18</sup> [http://www.unodc.org/pdf/crime/convention\\_corruption/signing/Convention-e.pdf](http://www.unodc.org/pdf/crime/convention_corruption/signing/Convention-e.pdf)

մոնիթորինգի մեխանիզմ, որը կպարունակի պարտադիր և կամավոր դրույթներ, ինչպես նաև հիմնել միջազգային հիմնադրամ իրավական գծով փորձագետների համար ու մշակել դատական և իրավապահ մարմինների կարողությունների զարգացման համաշխարհային ծրագիր:

Եվրոպական եվրոպական հարևանության քաղաքականության (ENP) շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006թ. նոյեմբերին վավերացրել են գործողությունների ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ<sup>19</sup>: Հայաստանի գործողությունների ծրագրում հատուկ գերակայությունների մեջ ներառվել են 8 հակակոռուպցիոն միջոցառումներ, այդ թվում՝ պատշաճ քննության ապահովումը և կոռուպցիոն հանցանքների հետապնդումը, Քրեական օրենսգրքի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, դատավորմերի և դատախազների եթևայի կանոնների մշակումը, պաշտոնյաների կողմից գույքի և եկամտի սխալ հայտարարագրման դեպքում պատասխանատվության սահմանումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը և այլն: Այս գործողությունների ծրագրում նշված համարյա բոլոր միջոցառումները ներառված են նաև վերոհիշյալ կոնվենցիաներում և GRECO-ի ու OECD-ի առաջարկություններում:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցագրուցավարների դիտարկումների համաձայն 2006թ. հարցման մասնակիցների մեծամասնության (74.0%) վերաբերմունքը համագործակցող էր, 13.0%-ինը՝ զգուշավոր, 7.0%-ինը՝ անտարբեր, 4.0%-ինը՝ դժգոհ, իսկ 2.0%-ը ցույց է տվել այլ վերաբերմունք: Ընդհանուր առմամբ, գյուղների բնակչները ավելի բարյացակամ են եղել, քան քաղաքների բնակչները: Նմանապես, Երևան քաղաքի կենտրոնում բնակվողները հարցագրուցավարների նկատմամբ պակաս բարյացակամություն են ցուցաբերել, քան այլ թաղային համայնքներում բնակվողները:

2006թ. հարցվողների ճնշող մեծամասնությունը (96.0%) հեռուստատեսությունը նշել է որպես կոռուպցիային առնչվող տեղեկատվության հիմնական աղբյուր՝ ռադիոյի, տպագիր մամուլի, ինտերնետի և այլ աղբյուրների շարքում:

1 500 հարցվողներից 40.0%-ը եղել է տղամարդ, 60.0%-ը՝ կին, 23.5%-ը պատկանել է «18-30», 29.3%-ը՝ «31-45», 31.7%-ը՝ «46-60» և 15.5%-ը՝ «61 և բարձր» տարիքային խմբերին: Միջնակարգ (36.0%), բարձրագույն (31.0%) և միջնակարգ մասնագիտական կրթություն (28.0%) ունեցող անձինք կազմել են երեք ամենամեծ խմբերը, իսկ 3.0%-ն ունեցել է թերի միջնակարգ կրթություն և 1.0%-ը՝ գիտական կոչում: 2002թ. կոռուպցիայի ընկալման ուսումնասիրության ժամանակ արձանագրվել է սեռային, տարիքային և կրթական խմբերի նմանատիպ հարաբերակցությունը<sup>20</sup>:

2006թ. հարցման մասնակիցների գրաղացնության խմբերի հարաբերակցությունը տարբերվել է 2002թ. հարցվողների խմբերից: Եթե 2006թ. ուսումնասիրության մասնակիցների 23.0%-ը կազմել են տնային տնտեսությունները, 20.0%-ը՝ պետական հաստատության աշխատակիցները, 15.0%-ը՝ թոշակառուները, 12.0%-ը՝ գյուղատնտեսության մեջ ներգրավվածները, 8.0%-ը՝ մասնավոր հաստատության աշխատակիցները, 8.0%-ը՝ ինքնազբաղվածները, 5.0%-ը՝ գործազուրկները, 4.0%-ը՝ ուսանողները, 3.0%-ը՝ քաղաքացիական-պետական ծառայողները, 1.0%-ը՝ գործարարները և 0.5%-ը՝ արտագնա աշխատողները, ապա 2002թ.-ին շատ ավելի մեծ էր գործազուրկ հարցվողների (33.2%) և շատ ավելի փոքր՝ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը (2.7%-ից ցածր)<sup>21</sup>:

Հարցվողների մեծամասնությունը (65.0%) իր կենսամակարդակը գմահատել է որպես «միջին», 9.0%-ը և 15.0%-ը, համապատասխանաբար, որպես «շատ վատ» և «վատ», իսկ 2.0%-ը և 9.0%-ը, համապատասխանաբար, որպես «շատ լավ» և «լավ»: Մինչեւ, միջին ամսական եկամտի վերաբերյալ ստացվել են հետևյալ պատասխանները. 5.0%-ն ասել է, որ այն ցածր է 10 000 ՀՀ դրամից, 19.0%-ի մոտ եկամուտը կազմել է 11-25 000 ՀՀ դրամ, 30.0%-ի մոտ՝ 26-50 000 ՀՀ դրամ, 26.0%-ի մոտ՝ 51-100 000 ՀՀ դրամ, 14.0%-ի մոտ՝ 101-200 000 ՀՀ դրամ և 5.0%-ի մոտ՝ 200 000 ՀՀ դրամ և բարձր: Հարցվող տնային տնտեսությունների եկամուտները ստացվել են հետևյալ աղբյուրներից՝ աշխատավարձ (45.0%), եկամուտ ինքնազբաղվածությունից (24.0%), թոշակ (13.0%), օգնություն արտերկրից (13.0%) և նպաստ (4.0%):

«Ի՞նչ է կոռուպցիան» հարցը տրվել է միայն 2006թ. հարցման ժամանակ: Հարցվողների 40.1%-ը կոռուպցիան համարել է «հանցագործություն», 11.8%-ը՝ «անբարոյականություն», 14.6%-ը՝ «ընդունված


<sup>19</sup> [http://www.delarm.cec.eu.int/en/press/16\\_11\\_2006.pdf](http://www.delarm.cec.eu.int/en/press/16_11_2006.pdf)

<sup>20</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության ներսության մակարդակի համապատասխան պահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 2

<sup>21</sup> Նույնը

ավանդույթ», 22.8%-ը՝ «ազգային մտածելակերպ», իսկ 8.9%-ը տվել է այլ պատասխաններ, որոնցում մեծամասնություն էր կազմում «կաշառակերություն» հասկացությունը (տես Պատկեր 1):


**Պատկեր 1. Ի՞նչ է կոռուպցիան:**



Պատասխանների համադրումը ըստ բոլոր ժողովրդագրական կատեգորիաների ցույց է տվել, որ հարցվողների մեծամասնությունը կոռուպցիան համարել է «հանցագործություն» (տես Պատկեր 1 Հավելված 3, 4, 5 ու 7-ում և Այլուսակ 1 Հավելված 6-ում): Քաղաքային և գյուղական բնակչության պատասխանների միջև չի նկատվել էական տարբերություն (տես Պատկեր 1 Հավելված 8-ում), իսկ մարզային կտրվածքով «հանցագործություն» պատասխանների ավելի մեծ տոկոս է արձանագրվել Վայոց Ձորի մարզում (տես Պատկեր 1 Հավելված 9-ում):

2002թ. կոռուպցիան համարվել է հիմնախնդիր հարցվողների 80.0%-ի կողմից, և միայն 4.0%-ն է կարծիք արտահայտել, որ այն հիմնախնդիր չէ<sup>22</sup>: 2006թ. հարցման արդյունքները ցույց են տվել, որ գումարային առումով հարցվողների ավելի մեծ մասը (մոտ 89.0%) կարծում է, որ կոռուպցիան հիմնախնդիր (30.8%) և մեծ հիմնախնդիր (58.2%) է Հայաստանում, և ավելի փոքր մասը (1.8%)՝ որ այն հիմնախնդիր չէ (տես Պատկեր 2):

**Պատկեր 2. Արդյո՞ք կոռուպցիան հիմնախնդիր է Հայաստանում:**




Կոռուպցիան համարվել է հիմնախնդիր կամ մեծ հիմնախնդիր հարցվածների մեծամասնության կողմից՝ ժողովրդագրական բոլոր խմբերում (տես Պատկեր 2 Հավելված 3, 4, 5 ու 7-ում և Այլուսակ 2 Հավելված 6-ում): Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում հարցվողների գգալի մասը կիսել է նույն կարծիքը (տես Պատկեր 2 Հավելված 8-ում): Նույն տեսակետում արտացոլվել է նաև բոլոր վարչատարածքային միավորների հարցվողների պատասխաններում (տես Պատկեր 2 Հավելված 9-ում):

<sup>22</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 2


**Պատկեր 3-ում** ցույց է տրված, որ ուսումնասիրության մասնակիցների 67.7%-ը համոզված է, որ կոռուպցիան միշտ եղել է Հայաստանում, 20.5%-ն ասել է, որ այն ի հայտ է եղել անկախության ձեռքբերումից հետո, 8.4%-ը նշել է, որ այն տարածվել է սովետական կարգերի հաստատումից հետո, իսկ 1.9%-ը ընտրել է «միջև սովետական կարգերի հաստատումը» պատասխանը: 2002թ. հարցվողների միայն 14.1%-ն էր ասել, որ կոռուպցիան եղել է միշտ, 27.5%-ը նշել էր «անկախության ձեռքբերումից հետո», 25.1%-ը՝ «ԽՍՀՄ կազմավորումից հետո», իսկ 31.6%-ը՝ «միջև ԽՍՀՄ կազմավորումը» պատասխանները<sup>23</sup>:

#### Պատկեր 3. Երբվանից է կոռուպցիան տարածվել հայ հասարակությունում:



Վերջին ժամանակաշրջանում կոռուպցիայի մակարդակի փոփոխության վերաբերյալ հարցի պատասխանները ներկայացված են **Պատկեր 4-ում**: Հարցվողների մեկ երրորդը (33.5%) նշել է, որ վերջին երեք տարվա ընթացքում կոռուպցիայի մակարդակը երկորում զգալիորեն աճել է, 30.5%-ը համարել է, որ այն աճել է, 23.3%-ը ասել է, որ այն չի փոփոխվել, և միայն 7.6%-ն է պատասխանել, որ նվազել է: Թեև 2002թ. նույն հարցը տրվել էր վերջին հինգ տարվա կտրվածքով, պատասխանների բաշխումը մոտ է 2006թ. արդյունքներին (համապատասխանաբար 34.4%, 32.6%, 24.8% և 2.8%)<sup>24</sup>:

#### Պատկեր 4. Ինչպես է Հայաստանում փոխվել կոռուպցիայի մակարդակը վերջին երեք տարվա ընթացքում:




**Պատկեր 5-ը** ցույց է տալիս, որ կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ հարցին տրվող երեք առավել հաճախ հանդիպող պատասխաններն են «կաշառք տալը», «կաշառք վերցնելը» և «պետական միջոցները սեփական շահերի համար օգտագործելը»: Ինչ վերաբերում է 2002թ. հարցմանը, ապա համարյա բոլոր մասնակիցները կոռուպցիան կապել են կաշառք տալու (96.5%), կաշառք վերցնելու (93.5%) և պաշտոնի չարաշահման հետ (91.7%)<sup>25</sup>:

<sup>23</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 2

<sup>24</sup> Նույնը


<sup>25</sup> Նույնը

## Պատկեր 5. Նշված օրինակներից որո՞նք եք Դուք համարում կոռուպցիայի դրսևորում:




«Ո՞վքեր են Հայաստանում նպաստում կոռուպցիայի տարածմանը» հարցին 2006թ. հարցվողների 58.2%-ը առաջին հերթին նշել է պետական պաշտոնյաներին, երկրորդ հերթին (38.8%-ը)` կրկին պետական պաշտոնյաներին և երրորդ հերթին (34.3%-ը)` կուսակցություններին (տես Պատկեր 6.1, 6.2 և 6.3): 2002թ. հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը (94.5%) նույնպես նշել է պետական պաշտոնյաներին որպես կոռուպցիայի տարածմանը նպաստողներ, սակայն հնարավորություն չի ունեցել դասակարգելու պատասխանները<sup>26</sup>:

## Պատկեր 6.1. Ովքե՞ր են Հայաստանում նպաստում կոռուպցիայի տարածմանը առաջին հերթին: (հարցին պատասխանել է հարցվողների 100.0%-ը)




<sup>26</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը». հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/ԹԻ-Հայաստան. Երևան, 2002, էջ 2-3

**Պատկեր 6.2. Ովքե՞ր են Հայաստանում նպաստում կոռուպցիայի տարածմանը երկրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 85.6%-ը)




**Պատկեր 6.3. Ովքե՞ր են Հայաստանում նպաստում կոռուպցիայի տարածմանը երրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 66.9%-ը)



«Հայաստանում պետական ո՞ր մակարդակում է կոռուպցիան ավելի լայն տարածված» հարցին 2006թ. ստացված պատասխանների բաշխումը բավականին ննան է եղել 2002թ. բաշխմանը<sup>27</sup>: Հարցվողների համարյա կեսն (47.8%) ասել է, որ կոռուպցիան տարածված է Հայաստանի պետական կառավարման բարձր համակարգում, 39.4%-ը պատասխանել, որ այն գոյություն ունի բոլոր մակարդակներում, 11.9%-ը կարծում է, որ այն տարածված է միջին մակարդակում և միայն 0.5%-ն է նշել ցածր մակարդակը (տես Պատկեր 7):

**Պատկեր 7. Հայաստանում պետական ո՞ր մակարդակում է կոռուպցիան ավելի լայն տարածված:**




2002թ. տվյալների համաձայն որպես չափազանց կոռումպացված կառույցներ առավել հաճախ նշվել են դատարանները (45.4%), դատախազությունը (43.3%) և վարչապետի աշխատակազմը (34.4%): Այս հարցին, թե, մասնավորապես, որոնք են երեք առավել կոռումպացված պետական ինստիտուտները, հարցվողները հիմնականում պատասխանել են, որ դրանք բոլորն էլ կոռումպացված են և դժվար է

<sup>27</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/ԹԻ-Հայաստան. Երևան, 2002, էջ 3

առանձնացնել առավել կոռումպացվածները<sup>28</sup>: Մինչդեռ, 2006թ. հարցման մասնակիցների 63.8%-ը թվարկված 22 ինստիտուտներից որպես «շատ կոռումպացված» ընտրել է նախարարներին, 52.9%-ը՝ վարչապետին և 52.4%-ը՝ դատախազության համակարգը (տես *Պատկեր 8*):


**Պատկեր 8. Ինչպե՞ս կգնահատեիք կոռուպցիայի տարածվածության աստիճանը հետևյալ պետական կառույցներում:**




Առաջնահերթության կարգով (առաջին, երկրորդ և երրորդ տեղերում) որպես առավել կոռումպացված ինստիտուտներ են նշվել նախագահը (տես *Պատկեր 8.1*), վարչապետը (տես *Պատկեր 8.2*) և նախարարները (տես *Պատկեր 8.3*):

<sup>28</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսելորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնակիրություն», ՏԶՀ/Թի՛-Հայաստան. Երևան, 2002, էջ 3.


**Պատկեր 8.1. Որո՞նք են առավել կոռումպացված պետական կառույցները առաջին հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 98.4%-ը)



**Պատկեր 8.2. Որո՞նք են առավել կոռումպացված պետական կառույցները երկրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 97.6%-ը)



**Պատկեր 8.3. Որո՞նք են առավել կոռումպացված պետական կառույցները երրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 96.6%-ը)




Նախագահը առաջին հերթին նշվել է որպես ամենակոռումպացված ինստիտուտ նաև բոլոր ժողովրդագրական խմբերում (տես Պատկեր 3 Հավելված 3, 4, 5 ու 7-ում և Այլուսակ 3 Հավելված 6-ում): Նմանապես, քաղաք-գյուղ կտրվածքով, ինչպես նաև մարզային կտրվածքով (հատկապես Արմավիրի մարզում) հարցման նասնակիցների մեծամասնությունը այս հարցում առաջնահերթությունը տվել է նախագահին (տես Պատկեր 3 Հավելված 8 և 9-ում):

Պատկեր 9-ում ներկայացված են առավել կոռումպացված ոլորտները/ծառայությունները 2006թ. հարցվողների ընկալմամբ: Թվարկված 35 տարրերակների շարքում հարցման նասնակիցների 73.9%-ը որպես «շատ կոռումպացված» նշել են ընտրական համակարգը, 68.2%-ը՝ պետավոտութեաչությունը և 63.3%-ը՝ հարկային ծառայությունը: 2002թ. հարցման արդյունքներով պետավոտութեաչությունը նույնպես համարվել է «չափազանց կոռումպացված» հարցվողների 51.5%-ի կողմից, բանակի (46.6%) և առողջապահության (43.2%) հետ մեկտեղ: Չորս տարի առաջ իրականացված ուսումնասիրության մասնակիցները հրաժարվել են կոռումպացված պահանջման մատնանշել որպես առաջին, երկրորդ և երրորդ կարգի առավել կոռումպացված, քանի որ բոլորին էլ համարել են այդպիսին<sup>29</sup>:


<sup>29</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/ԹԻ-Հայաստան. Երևան, 2002, էջ 3

**Պատկեր 9. Ինչպես կգնահատեիք հետևյալ ոլորտներում/ծառայություններում կոռուպցիայի տարածվածության աստիճանը:**




2006թ. հարցման մասնակիցները կատարել են առաջին, երկրորդ և երրորդ «կարգի» առավել կոռումպացված ոլորտների և ծառայությունների ընտրություն (տես Պատկեր 9.1, 9.2 և 9.3): Առաջին տեղում ավելի հաճախ նշվել է առողջապահությունը, երկրորդում՝ կրթությունը և երրորդում՝ պետականությունը (նմացած բոլոր պատասխանները եղել են 3.0%-ից քիչ):


**Պատկեր 9.1. Ո՞րն է առավել կոռումպացված ոլորտը/ծառայությունը առաջին հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 99.5%-ը)



**Պատկեր 9.2. Ո՞րն է առավել կոռումպացված ոլորտը/ծառայությունը երկրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 99.4%-ը)



**Պատկեր 9.3. Ո՞րն է առավել կոռումպացված ոլորտը/ծառայությունը երրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 98.7%-ը)



Պատասխանների համադրումը ըստ սերի և տարիքի չի բացահայտել է առաջին տարբերություններ առաջին ամենակոռումպացված ոլորտի/ծառայության ընտրության հարցում (տես Պատկեր 4 Յավելված 3 և 4-ում): Տարբերությունն առկա է կրթական կտրվածքով. բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ առաջին հերթին շեշտել են ընտրական համակարգը, մինչդեռ բոլոր մյուս խմբերը որպես ամենակոռումպացված նշել են առողջապահությունը (տես Պատկեր 4 Յավելված 5-ում):


Առողջապահությունը համարել է առաջին ամենակոռումպացված ոլորտ տարբեր զբաղմունքների տեր անձանց մեծամասնությունը, սակայն, ուսանողների մի մեծ խումբ նախապատվությունը տվել է կրթության ոլորտին, իսկ ինքնազբաղված մարդիկ՝ ընտրական համակարգին (տես Աղյուսակ 4 Յավելված 6-ում): 50 000 ՀՀ դրամից ցածր ամսական միջին եկամուտ ունեցողները որպես առաջին ամենակոռումպացված ոլորտ առավել հաճախ նշել են առողջապահությունը, 51-100 000 ՀՀ դրամ ստացողները՝ կրթությունը և ընտրությունները, 101-200 000 ՀՀ դրամ եկամուտ ունեցողները՝ ընտրական համակարգը, իսկ 200 000 ՀՀ դրամ և ավել ստացողները՝ մաքսային ծառայությունը (տես Պատկեր 4 Յավելված 7-ում): Եվ վերջապես, ավելի շատ գյուղաբնակներ քան քաղաքանակներ են առաջին հերթին մատնանշել առողջապահությունը որպես առավել կոռումպացված ոլորտ (տես Պատկեր 4 Յավելված 8-ում):

2006թ. բոլոր հարցվողների միայն 28.3%-ն է դրական պատասխան տվել «Վերջին երեք տարվա ընթացքում Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները «ոչ պաշտոնական վճարումներ» կատարել ե՞ք» հարցին, 68.7%-ը տվել է բացասական պատասխան, իսկ 3.0%-ը հրաժարվել է հարցին պատասխաննելուց: Ինչպես ներկայացված է Հավելված 10-ում, պետավոտությունը, առողջապահությունը և կրթությունը առավել հաճախ են հիշատակվել որպես ոլորտներ, որոնցում հարցվողների կողմից կատարվել են ոչ պաշտոնական վճարումներ: Ընդ որում, պատասխաններում նշված վճարումների գումարի չափը 1 ԱՄՆ դոլարից հասնում է մինչև 6 000 ԱՄՆ դոլարի:

2002թ. հարցման մասնակիցներին առաջարկվել էր տեղեկություն տալ միայն վերջին մեկ տարվա «ոչ պաշտոնական վճարումների» մասին, և առավել հաճախ նշվող պատասխանները ներառել էին առողջապահությունը, բանակը և կրթությունը, իսկ բոլոր ոլորտներում այդ վճարների չափը 1 ԱՄՆ դոլարից հասել է մինչև 5 000 ԱՄՆ դոլարի<sup>30</sup>: Ի լրումն նախկինում նշված ոլորտների/ծառայությունների՝ 2006թ. հարցման արդյունքում բացահայտվել են նոր ոլորտներ/ծառայություններ, որոնցում կատարվել են «ոչ պաշտոնական վճարումներ»: Դրանք են իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, օտարերկրյա դեսպանատները, շրջակա միջավայրին առնչվող ծառայությունները, հանատիրությունները և քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը:

Պատկեր 10-ում ներկայացված է կոռուպցիայի պատճառների վերաբերյալ հարցի պատասխանների բաշխումը: Հարցվողների ճնշող մեծամասնությունը որպես կոռուպցիայի հիմնական պատճառներ նշել է օրենքների թերի կիրառումը (94.0%), կոռուպցիայի նկատմամբ հանրության հանդուժողականությունը (87.8%) և անկատար վերահսկողական մեխանիզմներն ու պատժամիջոցները (87.7%): 2002թ. որպես կոռուպցիայի հիմնական պատճառ նշվել էր օրենքի վատ կիրառումը (83.8%), անկատար օրենսդրությունը/կանոնակարգերը/ընթացակարգերը (69.3%) և վերահսկողական մեխանիզմների և պատժամիջոցների բացակայությունը (59.0%): Մինչեւ, հարցվողների միայն 36.5%-ն էր կոռուպցիայի հիմնական պատճառների շարքում նշել կոռուպցիայի հանդեպ հասարակության հանրուժողականությունը<sup>31</sup>:

#### Պատկեր 10. Որո՞նք են Հայաստանում կոռուպցիայի տարածման հիմնական պատճառները:




<sup>30</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 11


<sup>31</sup> Նույնը, էջ 8

Ի պատճառական կոռուպցիայի հիմնական պատճառներից երեք առավել կարևորագույնն ընտրելու առաջարկին՝ 2006թ. հարցման մասնակիցները մատնանշել են «քաղաքական կամքի բացակայությունը» առաջին հերթին և «օրենքների թերի կիրառումը» երկրորդ և երրորդ հերթին (տես Պատկեր 10.1, 10.2 և 10.3):


**Պատկեր 10.1. Որո՞նք են կոռուպցիայի պատճառները առաջին հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 99.8%-ը)



**Պատկեր 10.2. Որո՞նք են կոռուպցիայի պատճառները երկրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 99.6%-ը)



**Պատկեր 10.3. Որո՞նք են կոռուպցիայի պատճառները երրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 99.1%-ը)




Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք առավել հաճախ նշել են «քաղաքական կամքի բացակայությունը» որպես կոռուպցիայի առաջին հիմնական պատճառ (տես Պատկեր 5 Դավելված 3-ում): 46 տարեկանից բարձր հարցվողները ավելի հաճախ նախընտրել են «կլանային շահերի գերակայությունը պետականի նկատմամբ» պատճառականը (տես Պատկեր 5 Դավելված 4-ում): Թերի միջնակարգ, միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող հարցվողները ընտրել են «քաղաքական կամքի բացակայությունը» պատճառականը, մինչդեռ տոկոսային հարաբերությամբ ավելի շատ բարձրագույն կրթությամբ հարցվողներ մատնանշել են «կլանային շահերի գերակայությունը պետականի նկատմամբ» (տես Պատկեր 5 Դավելված 5-ում):

Տարբեր գրաղմունքների տեր հարցվողների պատասխանների համադրումը ցույց է տվել, որ «քաղաքական կամքի բացակայություն»-ը և «կլանային շահերի գերակայությունը պետականի նկատմամբ» նշվել են հաճարյա բոլոր խնդերի կողմից: Բացի այդ, գյուղատնտեսության մեջ ներգրավվածները առաջին տեղում ընտրել են «օրենքների թերի կիրառում»-ը, իսկ ուսանողները նշել են և՝ «քաղաքական կամքի բացակայություն»-ը, և՝ «օրենքների թերի կիրառում»-ը (տես Աղյուսակ 5 Դավելված 6-ում): «Քաղաքական կամքի բացակայություն»-ը և «կլանային շահերի գերակայությունը պետականի նկատմամբ» ամենահաճախն են նշվել նաև տարբեր եկամուտ ունեցող մարդկանց պատասխաններում (տես Պատկեր 5 Դավելված 7-ում):

Գյուղական վայրերի բնակիչներին առավել մտահոգել է «քաղաքական կամքի բացակայություն»-ը, իսկ քաղաքարնակները ավելի հաճախ շեշտել են «կլանային շահերի գերակայությունը պետականի նկատմամբ» (տես Պատկեր 5 Դավելված 8-ում): Վայց Չորի մարզում հարցվողների ամենամեծ խնդիրն անհանգստացրել է «քաղաքական կամքի բացակայություն»-ը, Տավուշ մարզի բնակիչներն ավելի հաճախ նշել են «կլանային շահերի գերակայությունը պետականի նկատմամբ», իսկ Շիրակի մարզի հարցվողների հիմնական մտահոգությունը եղել է «օրենքների թերի կիրառում»-ը (տես Պատկեր 5 Դավելված 9-ում):

Ինչպես ցույց է տրված Պատկեր 11-ում, 2006թ. հարցման նաև կիցներն առավել հաճախ կոռուպցիան արդարացրել են «նպատակին հասնելու այլ ժանապարհ չկա» (41.9%) հիմնավորմամբ, օրինական գործընթացը արագացնելու ձգտումով (38.2%) և պատշաճ սպասարկում/ծառայություն ստանալու ցանկությամբ (35.1%): Չորս տարի առաջ հարցվողների ավելի քան կեսը նույնպես կոռուպցիայի վարքագիծը բացատրել էր գործընթացների/ընթացակարգերի արագացման ցանկությամբ (61.6%) և նպատակին հասնելու համար այլ հնարավորությունների բացակայությամբ (60.0%)<sup>32</sup>:


**Պատկեր 11. Ինչո՞ւ է արդարացվում կոռուպցիան:**




<sup>32</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 3

**Պատկեր 11.1, 11.2 և 11.3-ը ցույց են տալիս, որ կոռուպցիայի երեք հիմնական արդարացումներ ընտրելիս 2006թ. հարցման մասնակիցները նշել են միևնույն տարբերակները՝ «նպատակին հասնելու այլ ճանապարհ չկա» (առաջին հերթին), «օրինական գործընթացը արագացնելու ձգտումով» (երկրորդ հերթին) և «պատշաճ սպասարկում/ծառայություն ստանալու ցանկությանը» (երրորդ հերթին):**


**Պատկեր 11.1. Ինչո՞վ է արդարացվում կոռուպցիան առաջին հերթին:**  
(հարցվողների 39.0%-ը առհասարակ չի համաձայնվել ոչ մի արդարացման հետ)



**Պատկեր 11.2. Ինչո՞վ է արդարացվում կոռուպցիան երկրորդ հերթին:**  
(հարցվողների 39.0%-ը առհասարակ չի համաձայնվել ոչ մի արդարացման հետ,  
իսկ 12.0%-ը չի պատասխանել այս հարցին)




**Պատկեր 11.3. Ինչո՞վ է արդարացվում կոռուպցիան երրորդ հերթին:**  
(հարցվողների 39.0%-ը առհասարակ չի համաձայնվել ոչ մի արդարացման հետ,  
իսկ 22.0%-ը չի պատասխանել այս հարցին)



Կոռուպցիայի հետևանքների շարքում 2002թ. հարցման մասնակիցները առավել մեծ ուշադրություն են դարձել աղքատության կտրուկ խորացմանը (66.5%), հանցագործությունների և օրինազանցությունների քանակի (65.8%) և արտագաղթի ծավալների (65.2%) աճին<sup>33</sup>: Իսկ 2006թ. հիմնականում նատնանշվել է ոչ միայն հանցագործությունների և օրինախախտումների աճը (90.0%), այլ նաև իշխանությունների լեզիտիմության նվազեցումը (89.3%) և պետական կառավարման համակարգի անարդյունավետությունը (87.5%), ինչպես ներկայացված է Պատկեր 12-ում:


**Պատկեր 12. Որո՞նք են կոռուպցիայի տարածման հետևանքները:**




2006թ. հարցման մասնակիցները կոռուպցիայի հետևանքների շարքում առաջին հերթին նշել են աղքատության աճը, երկրորդ հերթին՝ իշխանությունների լեզիտիմության նվազեցումը և արտագաղթի աճը, իսկ երրորդ հերթին՝ հասարակական ապատիայի աճը (տես Պատկեր 12.1, 12.2 և 12.3):

<sup>33</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 3


**Պատկեր 12.1. Ո՞րն է կոռուպցիայի տարածման հիմնական հետևանքը առաջին հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 99.7%-ը)



**Պատկեր 12.2. Ո՞րն է կոռուպցիայի տարածման հիմնական հետևանքը երկրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 99.3%-ը)



**Պատկեր 12.3. Ո՞րն է կոռուպցիայի տարածման հիմնական հետևանքը երրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 98.5%-ը)




Բոլոր ժողովրդագրական խմբերում որպես կոռուպցիայի առաջին հիմնական հետևանք առավել հաճախ նշվել է աղքատության ածը (տես *Պատկեր 6 Հավելված 3, 4, 5 ու 7-ում և Աղյուսակ 6 Հավելված 6-ում*): Աղքատության ածով ամենաշատ մտահոգությունն արտահայտվել է Վայոց Զորի մարզում (տես *Պատկեր 6 Հավելված 9-ում*):

2006թ. հարցման մասնակիցների կեսից ավելին (50.7%) պատասխանել է, որ իրենք կաշառք չեն վերցնի, քանի որ դա անընդունելի է իրենց համար, 12.0%-ը պատասխանել է, որ կվերցնեն, քանի որ ունեն փողի կարիք, իսկ 10.0%-ը՝ կվերցնեն, քանի որ բոլորը վերցնում են (տես *Պատկեր 13*): «Այլ» պատասխան տվյալների մեծամասնությունը նշել է «կվերցնեն» կամ «չեմ վերցնի» առանց մանրամասների, իսկ մյուս կարգի պատասխանների քանակը եղել է 3.0%-ից ցածր:

Մինչդեռ 2002թ. հարցվողների միայն մեկ երրորդն էր նշել, որ ինքը չի վերցնի կաշառք, քանի որ դա անընդունելի է, 27.7%-ը պատասխանել էր՝ որ կվերցնի, քանի որ բոլորը վերցնում են և 23.0%-ը՝ կվերցնի, եթե առաջարկողն ունի բարձր եկամուտ<sup>34</sup>:

### **Պատկեր 13. Ինչպես կվարվեք, եթե Ձեզ կաշառք առաջարկեն:**



Հարցվողների մեծ մասը ժողովրդագրական բոլոր խմբերում նշել է, որ չի վերցնի կաշառք, քանի որ դա անընդունելի է իր համար (տես *Պատկեր 7 Հավելված 3, 4, 5 ու 7-ում և Աղյուսակ 1 Հավելված 6-ում*): Մարզային կտրվածքով, կոռուպցիայի նկատմամբ առավել մեծ հանդուրժողականություն դրսևորել են Արագածոտնի մարզի հարցվողները (տես *Պատկեր 7 Հավելված 9-ում*):


Ինչպես ներկայացված է *Պատկեր 14-ում*, հարցման մասնակիցների 23.0%-ը կտա կաշառք, քանի որ բոլորը տալիս են, 24.3%-ը չի տա և կփորձի գտնել «օգտակար» կապեր, իսկ 16.3%-ը կտա՝ փորձելով «բանակցել» գումարի վերաբերյալ: Ուսումնասիրության մասնակիցների 29.0%-ը տվել է «այլ» պատասխաններ, որոնց գգալի մասը կազմել են «չեմ տա» կամ «կտամ» տարբերակները, մինչդեռ պատասխանների մյուս խմբերը կազմել են 3.0%-ից ցածր:

Իսկ 2002թ. հարցվողների համարյա կեսը (47.2%) պատասխանել էր, որ կփորձի գտնել «օգտակար» կապեր, 29.7%-ը նշել էր, որ կփորձի բանակցել/սակարել, իսկ 19.1%-ը՝ որ կտա կաշառք առանց պարզաբանումների<sup>35</sup>:

<sup>34</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 3

<sup>35</sup> Նույնը

**Պատկեր 14. Ինչպե՞ս կվարվեք, եթե Ձեզնից պահանջվի կաշառը տալ:**




Պատասխանների համադրումը ըստ սերի բացահայտել է, որ տղամարդկանց ավելի մեծ մասը չի տա կաշառը և փոխարենը կփորձի գտնել «օգտակար» կապեր, իսկ կանանց ավելի մեծ մասը կտա կաշառը, քանի որ բոլորը տալիս են (տես Պատկեր 8 Դավելված 3-ում): «31-45» և «46-60» տարիքային խմբերի հարցվողների համարյա նույնչափ մասը պատասխանել է, որ կտա կաշառը, քանի որ բոլորը տալիս են, կամ կփորձի գտնել «օգտակար» կապեր: «18-30» տարիքային խմբի հարցվածները նախընտրել են գտնել «օգտակար» կապեր, իսկ 61-ից բարձր տարիք ունեցողները նշել են, որ կտան, քանի որ բոլորը տալիս են (տես Պատկեր 8 Դավելված 4-ում):

Թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցողների խմբերում հարցման մասնակիցների ամենամեծ մասը պատասխանել է, որ կտա կաշառը, քանի որ բոլորը տալիս են, իսկ միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների խմբերում ավելի հաճախ ասվել է, որ կաշառը չեն տա, քայլ կփորձեն գտնել «օգտակար» կապեր (տես Պատկեր 8 Դավելված 5-ում): Տնային տնտեսութիւնները, քաղաքացիական-պետական ծառայողները, գործազուրկներն ու թոշակառուներն ավելի հաճախ նշել են, որ իրենք կտան կաշառը, քանի որ բոլորը տալիս են, իսկ մասնավոր ու պետական հաստատությունների աշխատակիցները, ինքնազբաղվածները, գյուղատնտեսության մեջ ներգրավվածներն և ուսանողներն ասել են, որ իրենք ավելի շուտ կփորձեն գտնել «օգտակար» կապեր, քան կաշառը տալ (տես Աղյուսակ 8 Դավելված 6-ում): 25 000 ՀՀ դրամից ցածր և 200 000 ՀՀ դրամից բարձր եկամուտ ունեցող հարցվողներն առավել հաճախ նշել են, որ կտան, քանի որ բոլորը տալիս են: Մինչդեռ, 26 000-200 000 ՀՀ դրամ ստացող խմբերում առավել հաճախ հանդիպել է «կփորձեն գտնել «օգտակար» կապեր» պատասխանը (տես Պատկեր 8 Դավելված 7-ում):


Պատասխանների համադրումը ըստ բնակավայրերի ցույց է տվել, որ գյուղերի բնակչներն ավելի հակված են տալու կաշառը, քանի որ բոլորը տալիս են, իսկ քաղաքների բնակիչներն ավելի միտված են փնտրելու «օգտակար» կապեր (տես Պատկեր 8 Դավելված 8-ում): Կոտայքի մարզում հարցվողների մեծ մասը կաշառը կտա՝ «քանի որ բոլորը տալիս են», Արագածոտնում՝ «չի տա և կփորձի «բանակցել» գումարի վերաբերյալ» և Սյունիքում «չի տա ու կփորձի գտնել «օգտակար» կապեր» (տես Պատկեր 8 Դավելված 9-ում):

2006թ. հարցման մասնակիցների միայն 30.5%-ն է տեղյակ եղել ՀՀ կառավարության Հակակոռուպցիոն ռազմավարության մասին (տես Պատկեր 15), և միայն 15.6%-ն է ասել, որ գիտեն Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի մասին (տես Պատկեր 16): Մինչդեռ, շատ քչերն են կոնկրետ պատասխանել այն հարցին, որը պահանջում էր մանրամասներ Ռազմավարության և Խորհրդի վերաբերյալ:

**Պատկեր 15. Տեղյակ եք, արդյո՞ք, ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի մասին:**




**Պատկեր 16. Տեղյակ եք, արդյո՞ք, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի մասին:**




Ինչպես ներկայացված է Պատկեր 17-ում, ել ավելի քիչ հարցվողներ (8.6%) իրազեկ են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից Մոնիթորինգի հանձնաժողովի մասին, մինչդեռ, նրանք, ովքեր ասել են, որ տեղյակ են, հաճարյա տեղեկություն չունեն հանձնաժողովի անդամների և գործառույթների վերաբերյալ:

**Պատկեր 17. Տեղյակ եք, արդյո՞ք, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից մոնիթորինգի հանձնաժողովի մասին:**




Հարցման մասնակիցների միայն 15.7%-ն է նշել, որ ծանոթ է հակակոռուպցիոն ռլորտում Հայաստանի միջազգային պարտավորությունների մասին (տես Պատկեր 18): Այնուամենայնիվ, միայն մեկ հարցվող է նշել Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիան և մեկը՝ GRECO-ի անդամակցությունը, իսկ 29-ը ասել են, որ Հայաստանը պետք է բավարարի կոռուպցիայի դեմ պայքարի որոշակի միջազգային ստանդարտների, որպեսզի կարողանա անդամակցել Եվրոպային:

**Պատկեր 18. Տեղյակ եք, արդյո՞ք, կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների մասին:**



Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վերաբերյալ հարցին պատասխաննելիս մասնակիցների միայն 2.2%-ն է համարել, որ այն արդյունավետ է, 16.1%-ը նշել է, որ այն մասամբ արդյունավետ է, 33.6%-ը ասել է, որ արդյունավետ չէ, իսկ 40.7%-ը՝ որ բացարձակ արդյունավետ չէ (տես Պատկեր 19): 2002թ. նճանատիպ հարցին պատասխանողների 70.6%-ը կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունները համարել էր անարդյունավետ, 20.1%-ը՝ մասամբ արդյունավետ, 7.9%-ը՝ արդյունավետ և 0.7%-ը՝ շատ արդյունավետ<sup>36</sup>: Դարկն է նշել, որ 2002թ. հարցումն անցկացվել էր մինչև Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության ընդունումը:

**Պատկեր 19. Արդյունավետ է, արդյո՞ք, Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարը:**




2006թ. այն հարցվողների մեծամասնությունը, որոնց տեսանկյունից կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունները արդյունավետ կամ մասամբ արդյունավետ են, որպես դրական օրինակներ նշել են առողջապահության ու կրթության ոլորտներում որոշ փոփոխությունները (օրինակ՝ պոլիկլինիկաների անվճար ծառայություններ տրամադրելն և ընդունելության քննությունների ընթացքում կաշառակերության պակասելը), ինչպես նաև՝ կոռումպացված պաշտոնյաներ պատժելու որոշ հրապարակային դեպքերը:

2006թ. հարցվողների ճնշող մեծամասնությունը (93.9%) Հայաստանում կոռուպցիան նվազեցնելուն ուղղված կարևորագույն միջոցների շարքին դասել է օրենքների կիրառման ապահովումը, 91.9%-ը՝ կոռուպցիայում ներգրավված անձանց պատժելը, իսկ 91.3%-ը՝ իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացումը (տես Պատկեր 20): Ինչ վերաբերում է 2002թ. հարցման մասնակիցներին, ապա նրանք հիմնականում ընտրել էին օրենքների կիրառման ուժեղացումը (77.4%), իսկ վերահսկողական մեխանիզմների և պատժամիջոցների կիրառումը (57.3%), ինչպես նաև գործող օրենսդրության/ընթացակարգերի պարզեցումը (52.2%)<sup>37</sup>:

<sup>36</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 4


<sup>37</sup> Նույնը

**Պատկեր 20. Ի՞նչ միջոցներ է պետք ձեռնարկել Հայաստանում  
ներկա իրավիճակը բարելավելու համար:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 97.6%-ը)




Հայաստանի ներկա իրավիճակը բարելավելուն ուղղված երեք հիմնական լուծումներն ընտրելու առաջարկին 2006թ. հարցվողները առաջին և երկրորդ հերթին ընտրել են ազատ և արդար ընտրությունների ապահովումը, իսկ երրորդ հերթին՝ կոռուպցիայի մեջ ներգրավված անձանց պատժելը (տես Պատկեր 20.1, 20.2 և 20.3):


**Պատկեր 20.1. Ո՞րն է ներկա իրավիճակը բարելավելուն ուղղված լուծումը առաջին հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 97.6%-ը)



**Պատկեր 20.2. Ո՞րն է ներկա իրավիճակը բարելավելուն ուղղված լուծումը երկրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 96.9%-ը)



**Պատկեր 20.3. Ո՞րն է ներկա իրավիճակը բարելավելուն ուղղված լուծումը երրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 96.5%-ը)




Ազատ և արդար ընտրությունների ապահովումն ու կոռուպցիայի դեմ պայքարի նոր ուժային կառույցի ստեղծումը ժողովրդագրական բոլոր խմբերի կողմից առաջարկվել է որպես կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոց (տես Պատկեր 9 Դավելված 3, 4, 5 ու 7-ում և Աղյուսակ 9 Դավելված 6-ում): Դարցման մասնակիցների ամենաերիտասարդ խումբն առավել հաճախ ընդգծել է կոռուպցիայի դեմ պայքարի նոր ուժային կառույցի ստեղծումը, մինչդեռ 46-ից բարձր տարիքի հարցվողներն առաջնահերթությունը տվել են ազատ և արդար ընտրություններին (տես Պատկեր 9 Դավելված 4-ում): Նմանապես, միջնակարգ կրթություն ունեցող հարցվողները համոզված են եղել, որ հակակոռուպցիոն ուժային կառույցն ավելի արդյունավետ միջոց է երկրում կոռուպցիան նվազեցնելու գործում, քան ազատ և արդար ընտրությունների ապահովումը (տես Պատկեր 9 Դավելված 5-ում):

Կոռուպցիայի դեմ պայքարի նոր կառույցի ստեղծումն առավել հաճախ նշվել է քաղաքացիական-պետական ծառայողների, ուսանողների, տնային տնտեսությունների և գյուղատնտեսությունների ներգրավված անձանց կողմից, իսկ ազատ ու արդար ընտրություններին հիմնականում նախապատվություն են տվել գործազուրկները, ինքնազբաղվածներն և թոշակառուները (տես Աղյուսակ 9 Դավելված 6-ում): Մարզային կտրվածքով, Արագածոտն մարզի հարցվածներն ավելի շատ են մատնանշել կոռուպցիայի դեմ պայքարի նոր կառույցի ստեղծումը, իսկ Արմավիրի մարզի բնակչները՝ ազատ ու արդար ընտրությունների ապահովումը (տես Պատկեր 9 Դավելված 9-ում):

Դայաստանյան իրականության առավել համապատասխան ծևակերպումների շարքում 2006թ. հարցվողների 3.8%-ը նշել է, որ կոռուպցիան կարելի է խստա վերացնել, 23.3%-ն ասել է, որ այն կարելի է զգալիորեն նվազեցնել, 43.1%-ը՝ որ կարող է սահմանափակվել որոշ չափով, իսկ 29.8%-ը՝ որ չի կարող առհասարակ վերացվել (տես Պատկեր 21): Պատասխանների համարյա նմանատիպ բաշխում


արձանագրվել է նաև 2002թ., երբ հարցման մասնակիցների 1.6%-ը համարել է, որ կոռուպցիան կարելի է լրիվ վերացնել, 43.3%-ը՝ որ այն կարող է սահմանափակվել որոշ չափով, 21.9%-ը՝ որ կարող է նվազեցվել զգալիորեն, և 27.3%-ը՝ որ առհասարակ չի կարող վերացվել<sup>38</sup>:

#### **Պատկեր 21. Նշված ձևակերպումներից ո՞րն է ավելի բնորոշ մեր իրականությանը:**



2006թ. հարցվողների ճնշող մեծամասնությունը պատասխանել է, որ կոռուպցիայի հետ կապված ներկա իրավիճակի համար պատասխանատվություն են կրում կառավարությունը (94.1%), իրավապահ մարմինները (93.7%) և դատական համակարգը (91.7%) (տես Պատկեր 22):


#### **Պատկեր 22. Ո՞վ է կրում պատասխանատվություն այսօրվա կոռուպցիայի հետ կապված իրավիճակի համար:**




Այս հարցի պատասխանների մեջ առաջին հերթին մատնացույց են արվել նախագահը, երկրորդ հերթին նշվել է կառավարությունը, իսկ երրորդ հերթին՝ Ազգային ժողովը (տես Պատկեր 22.1, 22.2 և 22.3):

<sup>38</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 4


**Պատկեր 22.1. Ո՞վ է կրում պատասխանատվություն այսօրվա կոռուպցիայի հետ կապված իրավիճակի համար առաջին հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 99.5%-ը)



**Պատկեր 22.2. Ո՞վ է կրում պատասխանատվություն այսօրվա կոռուպցիայի հետ կապված իրավիճակի համար երկրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 98.2%-ը)



**Պատկեր 22.3. Ո՞վ է կրում պատասխանատվություն այսօրվա կոռուպցիայի հետ կապված իրավիճակի համար երրորդ հերթին:**  
(հարցին պատասխանել է հարցվողների 97.1%-ը)




Ժողովրդագրական համարյա բոլոր խմբերում հարցման մասնակիցների ավելի քան 60%-ը որպես կոռուպցիայի հետ կապված այսօրվա իրավիճակի պատասխանատու առաջին հերթին նշել է նախագահին, բացառությամբ ուսանողների ու 200 000 ՀՀ դրամից ավել եկամուտ ունեցողների (տես «Պատկեր 10 Հավելված 3, 4, 5 ու 7-ում և Աղյուսակ 10 Հավելված 6-ում»): Քաղաքային բնակչության ավելի քան 65%-ը և գյուղացիների ավելի քան 70%-ը նույնպես ընդգծել են նախագահի պատասխանատվությունը (տես «Պատկեր 10 Հավելված 8-ում»): Ըստ մարզային բաժանման, առավել հաճախ նման պատասխան տրվել է Արագածոտնի մարզի հարցվածների կողմից (տես «Պատկեր 10 Հավելված 9-ում»):

2002թ. ուսումնասիրության մասնակիցների մեծ մասը (77.1%) համարել է, որ նախագահը կարող է վճռորոշ դեր խաղալ Հայաստանում կոռուպցիայի նվազեցման գործում, 45.5%-ը այս կապակցությամբ մատնանշել էր կառավարությունը, 42.9%-ն անդրադարձել է Ազգային ժողովին, իսկ 34.4%-ը՝ անհատ քաղաքացիներին<sup>39</sup>: 2006թ. հարցման մասնակիցների 95.9%-ը «Ո՞վ կարող է վճռորոշ դեր կատարել կոռուպցիայի նվազեցման գործում» հարցին տվել է պատասխանների 1-5 տարրերակ: «Պատկեր 23-ում ներկայացված են միայն առաջին հերթին ընտրված պատասխանները, քանի որ պատասխանների մյուս խմբերը տոկոսային առումով քիչ են եղել 3.0%-ից (բացառություն է կազմել միայն մի դեպք, երբ հարցվողների 7.1%-ը նշել է կառավարությանը որպես պատասխանի երկրորդ տարրերակ): Ինչպես ցույց է տրված ստորև, հարցման մասնակիցների 47.0%-ը ընտրել է նախագահին, 9.4%-ը՝ կառավարությանը, 12.40%-ը՝ անհատ քաղաքացիներին, 7.1%-ը համարել է, որ ոչ ոք չի կարող էական դեր խաղալ, իսկ 20.0%-ը տվել է «այլ» պատասխաններ, որոնց մեջ և ոչ մի խումբ չի հասել 3.0%-ի:


#### **Պատկեր 23. Ո՞վ կարող է Հայաստանում էական դեր ունենալ կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ:**

(հարցին պատասխաններ է հարցվողների 95.9%-ը)



«Ի՞նչ կարող եք անել անձամբ Դուք կոռուպցիան նվազեցնելու ուղղությամբ» հարցին հարցվողների 58.8%-ը պատասխաննել է, որ ոչինչ չի կարող անել, 17.5%-ն ասել է, որ կարող է չվերցնել և չտալ կաշառք, 3.2%-ը դժվարացնել է պատասխան տալ, իսկ 20.5%-ը տվել է «այլ» պատասխաններ (տես «Պատկեր 24»): Նշված 20.5%-ի մեջ 3.0% են կազմել հետևյալ պատասխանները՝ «քարոզչություն անել ընդդեմ կոռուպցիայի», «օրինակ ծառայել ուրիշների համար», «մնալ մաքուր» և «հարգնել օրենքը»:

#### **Պատկեր 24. Իսկ ի՞նչ կարող եք անել անձամբ Դուք կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ:**



<sup>39</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը». հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/Թի-Հայաստան. Երևան, 2002, էջ 14

Հարցման վերջում յուրաքանչյուր մասնակցի ընձեռվել է լրացուցիչ մեկնաբանությունների հնարավորություն: Մեկնաբանություններ տվողների օգալի մասն արտահայտել է կարծիք, որ Երկիրը տառապում է կոռուպցիայից և իրավիճակն անհույս է, քանի որ իշխանությունները չեն նուածուն հասարակ քաղաքացիների մասին: Հարցվողները հավատում են, որ մաքուր ընտրությունների արդյունքում իշխանության եկած նոր քաղաքական ղեկավարությունը կկարողանա «աշխատեցնել» օրենքը, կիրառել խիստ պատժամիջոցներ և նվազեցնել կոռուպցիան:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կարծիքի ուսումնասիրությունները (հարցումները) և ընկալման համարվերը ստացել են համաշխարհային ճանաչում որպես կոռուպցիայի մակարդակը չափելու վստահելի քանակական միջոցներ: Արյունավետ հակակոռուպցիոն ռազմավարություն մշակելու և իրականացնելու համար մեծագույն նշանակություն ունի բնակչության տարրեր խմբերում և տարրեր ինստիտուտներում (կառույցներում) կոռուպցիայի տարածվածության աստիճանի ու մակարդակի գնահատումը, կոռուպցիայի պատճառների ու հետևանքների բացահայտումը, կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողականության աստիճանի որոշումը և այլն: Օրինակ՝ տնային տնտեսությունների հարցումները կարող են օգնել ուսումնասիրելու կոռուպցիայի «զոհերին» և «խթանողներին»: Դրանք կարող են նաև օգտագործվել հակակոռուպցիոն քաղաքական օրակարգերի տեսանելիությունը մեծացնելու, կառավարության նախաձեռնությունների վերաբերյալ քաղաքացիների հետադարձ կապն ապահովելու և իշխանություններից ու դոնոր կազմակերպություններից առավել նպատակային ու փոխհամաձայնեցված գործողություններ պահանջելու համար:

Կոռուպցիայի ընկալման վերաբերյալ հասարակական կարծիքի առաջին ուսումնասիրությունը Հայաստանում իրականացվել է ՏԶԿ/ԹԻ-Հայաստանի կողմից 2002թ. 1 000 տնային տնտեսությունների, 200 գործարաբների և 200 պետական պաշտոնյաների շրջանում<sup>1</sup>: 2004 և 2005 թվականներին կազմակերպությունն անցկացրել է 2 հեռախոսային հարցում 680<sup>2</sup> և 1 500<sup>3</sup> մասնակիցների շրջանում: Բոլոր հարցումները նպատակ ունեին բացահայտելու, թե ինչպես են քաղաքացիներն ընկալում կոռուպցիան և ինչպես են գնահատում ընթացիկ հակակոռուպցիոն նախաձեռնությունները: Կոռուպցիայի ընկալման վերաբերյալ 2006թ. ուսումնասիրությունը, որն իրականացվել է ՏԶԿ/ԹԻ-Հայաստանի կողմից Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, ձեռնարկվել է հատուկ նպատակով, այն է՝ գնահատելու հասարակական կարծիքը այն ժամանակահատվածում, երբ իրականացվել է Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը:

2006թ. կոռուպցիայի ընկալման վերաբերյալ ուսումնասիրության նախապատրաստական աշխատանքներն, ինչպես նաև բոլոր հարցումն իրականացվել են օգսոսոս ամսին, իսկ տվյալների ճշգրտումը, մուտքագրումը, վերլուծությունը և հրապարակումը՝ 2006թ. սեպտեմբեր - 2007թ. հունվար ամիսներին: Հարցաշարը մշակվել է 2002թ. հարցաթերթի հիման վրա նախկին տվյալների հետ համեմատելու համար և վերջնական տեսքի բերվել կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղում 24 հարցվողների շրջանում փորձարկվելուց հետո:

Հարցաշարը ներառել է նոր հարցեր՝ հաշվի առնելով 2002թ.-ից ի վեր հակակոռուպցիոն բարեփոխումների զարգացումները (տես հարցեր 1, 16, 17, 18, 19, 20, 23 և 25 Հավելված 2-ում): 41 հարցերից և ենթահարցերից 7-ը հնարավորություն են ընձեռել դասակարգելու պատասխաններն ըստ առաջնահերթության, իսկ 7-ն՝ ակնկալել են բաց պատասխան: 2002թ. համեմատությամբ որոշ դեպքերում թերևակի փոփոխվել են պատասխանների տարբերակները (տես հարցեր 5, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15 և 21 Հավելված 2-ում):

2006թ. ընտրանքը ներառել է պատահականորեն ընտրված 1 500 տնային տնտեսություն (ի տարբերություն 2002թ. հարցման ենթարկված 1 000 տնային տնտեսության) Հայաստանի բոլոր մարզերում և երևան քաղաքում: Հարցման վիճակագրական սխալը կազմել է 2.6%: Ինչպես և 2002թ., այնպես էլ 2006թ. ընտրանքը համամատորեն բաշխվել է քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր մարզի բնակչության թիվն ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2001թ. մարդահամարի տվյալների<sup>4</sup>: Այսպիսով, ընտրանքը ընդգրկել է Հայաստանի 31 քաղաք և 40 գյուղ կամ, համապատասխանաբար, 998 և 502 տնային տնտեսություն, ինչը ներկայացված է ստորև բերվող Աղյուսակ 1-ում:

<sup>1</sup> «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն», ՏԶԿ/ԹԻ-Հայաստան. Երևան, 2002

<sup>2</sup> <http://www.transparency.am/publications/documents.php>

<sup>3</sup> «Կոռուպցիայի ընկալում Հայաստանում. 2005թ. հեռախոսային հարցում», Երևան, 2006

<sup>4</sup> <http://www.armstat.am/Census/cens.htm>

## Աղյուսակ 1. Հարցման ընտրանքը

N	Տնային տնտեսությունների բանակը  Բնակավայրեր	Ընդամենը	Քաղաքային բնակավայր	Գյուղական բնակավայր
		1500	998	502
<b>1</b>	<b>ք. Երևանի թաղային համայնքներ</b>	<b>492</b>	<b>492</b>	
1.1	Աջափնյակ	50	50	
1.2	Ավան	20	20	
1.3	Արարկիր	60	60	
1.4	Դավիթաշեն	19	19	
1.5	Էրեբունի	50	50	
1.6	Կենտրոն	72	72	
1.7	Մալաթիա/Սեբաստիա	63	63	
1.8	Նոր Նորք	52	52	
1.9	Նորք-Մարաշ	6	6	
1.10	Նուբարաշեն	3	3	
1.11	Շենգավիթ	57	57	
1.12	Քանաքեռ - Զեյթուն	40	40	
<b>2</b>	<b>Արագածոտնի մարզ</b>	<b>66</b>	<b>18</b>	<b>48</b>
2.1	Աշտարակ	10	10	
2.2	Ապարան	5	5	
2.3	Թալին	3	3	
2.4	Անտառուտ գյուղ	12		12
2.5	Գեղադիր գյուղ	12		12
2.6	Լեռնարոտ գյուղ	12		12
2.7	Մելիքգյուղ գյուղ	12		12
<b>3.</b>	<b>Արարատի մարզ</b>	<b>123</b>	<b>39</b>	<b>84</b>
3.1	Արտաշատ	19	19	
3.2	Մասիս	13	13	
3.3	Վեդի	7	7	
3.4	Այգեստան գյուղ	21		21
3.5	Գոռավան գյուղ	21		21
3.6	Կանաչուտ գյուղ	21		21
3.7	Նոր Լյանք գյուղ	21		21
<b>4.</b>	<b>Արմավիրի մարզ</b>	<b>128</b>	<b>48</b>	<b>80</b>
4.1	Արմավիր	18	18	
4.2	Վաղարշապատ	25	25	
4.3	Մեծամոր	5	5	
4.4	Այգեշատ գյուղ (Արմավիրի շրջան)	20		20
4.5	Բաղրամյան գյուղ (Էջմիածնի շրջան)	20		20
4.6	Խորոնք գյուղ	19		19
4.7	Նալբանդյան գյուղ	21		21
<b>5.</b>	<b>Գեղարքունիքի մարզ</b>	<b>110</b>	<b>42</b>	<b>68</b>
5.1	Գավառ	23	23	
5.2	Վարդենիս	13	13	
5.3	ճամբարակ	5	5	
5.4	Աստղածոր գյուղ	17		17
5.5	Երանոս գյուղ	18		18
5.6	Կալավան գյուղ	16		16
5.7	Շատպան գյուղ	18		18

<b>6.</b>	<b>Լոռու մարզ</b>	<b>155</b>	<b>104</b>	<b>51</b>
6.1	Վանաձոր	89	89	
6.2	Սպիտակ	12	12	
6.3	Ախթալա	3	3	
6.4	Անտառամուտ գյուղ	12		12
6.5	Դսեղ գյուղ	14		14
6.6	Կարմիր Աղեկ գյուղ	12		12
6.7	Մեծ Պառնի գյուղ	13		13
<b>7.</b>	<b>Կոտայքի մարզ</b>	<b>130</b>	<b>79</b>	<b>51</b>
7.1	Ջրազդան	45	45	
7.2	Չարենցավան	27	27	
7.3	Նոր Ջամն	7	7	
7.4	Արգել գյուղ	12		12
7.5	Արգական գյուղ	14		14
7.6	Կաթնաղբյուր գյուղ	12		12
7.7	Պտղնի գյուղ	13		13
<b>8.</b>	<b>Շիրակի մարզ</b>	<b>142</b>	<b>96</b>	<b>46</b>
8.1	Գյումրի	84	84	
8.2	Արթիկ	9	9	
8.3	Մարալիկ	3	3	
8.4	Ամասիա գյուղ	12		12
8.5	Գեղանիստ գյուղ	12		12
8.6	Ծաղկուտ գյուղ	12		12
8.7	Ջովտուն գյուղ	10		10
<b>9.</b>	<b>Սյունիքի մարզ</b>	<b>64</b>	<b>45</b>	<b>19</b>
9.1	Կապան	29	29	
9.2	Սիսիան	12	12	
9.3	Մեղրի	4	4	
9.4	Անտառաշատ գյուղ	5		5
9.5	Եղվարդ գյուղ	4		4
9.6	Ջալիջոր գյուղ	4		4
9.7	Շվանիձոր գյուղ	6		6
<b>10.</b>	<b>Վայոց Ձորի մարզ</b>	<b>27</b>	<b>10</b>	<b>17</b>
10.1	Եղեգնաձոր	4	4	
10.2	Վայք	3	3	
10.3	Զերմուկ	3	3	
10.4	Արին գյուղ	5		5
10.5	Արտարույնք գյուղ	5		5
10.6	Ջերմոն գյուղ	4		4
10.7	Ջորբատեղ գյուղ	3		3
<b>11.</b>	<b>Տավուշի մարզ</b>	<b>63</b>	<b>25</b>	<b>38</b>
11.1	Իջևան	10	10	
11.2	Դիլիջան	10	10	
11.3	Նոյենբերյան	5	5	
11.4	Այգեպար գյուղ	10		10
11.5	Աչաջուր գյուղ	8		8
11.6	Իծաքար գյուղ	9		9
11.7	Չինարի գյուղ	11		11

Յուրաքանչյուր մարզում ընտրվել է 3 քաղաք՝ ըստ բնակչության չափի (մեծ, միջին և փոքր): Գյուղական բնակավայրերն ենթարկվել են պատահական ընտրանքի (յուրաքանչյուր յոթերորդը այբբենական ցանկում), իսկ Երևանի տնային տնտեսությունների քանակը բաշխվել է 12 քաղային համայնքների միջև: Յուրաքանչյուր քաղաքում կամ գյուղում ընտրվել է ամենամեծ (որպես կանոն՝ նաև ամենաերկար) փողոցի ձախակողմյան շենքերից կամ տներից յուրաքանչյուր յոթերորդը: Շենքերում ընտրվել է առաջին մուտքի առաջին հարկի ձախակողմյան դուռը: Պատասխան չստանալու դեպքում, հարցազրուցավարը փորձել է երկրորդ հարկի ձախակողմյան դուռը և այդպես շարունակ:

Եթե գլխավոր փողոցի վրա չի եղել բավարար քանակով շենք/տուն, ընտրվել է դրա գուգահեռ փողոցը: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում (հիմնականում՝ գյուղական վայրերում) քայլը փոխվել է՝ առկա բնակելի շենքերի/տների թիվը բաժանելով հարցվողների անհրաժեշտ քանակի վրա: Տնային տնտեսություններում հարցման ենթակա չափահաս (18-ից բարձր) անձի ընտրությունը կատարվել է ըստ ծննդյան ամսաթվի՝ ընտրելով այն անձին, որի ծննդյան ամիսն ու օրը առավել մոտ են եղել հարցման օրվանը: Տվյալ անձի բացակայության դեպքում նույն սկզբունքը կիրառվել է ընտանիքի ներկա մյուս անդամների նկատմամբ:

Հարցումը սկսելուց առաջ անցկացվել է հատուկ դասընթաց 25 հարցազրուցավարների և 4 տվյալներ մուտքագրողների համար ներկայացնելու հարցման նպատակներն և խնդիրները, ինչպես նաև քննարկելու մեթոդաբանական ու կազմակերպչական հարցեր: Լրացված հարցաթերթերը կրկնակի ստուգվել են հարցազրուցավարների յուրաքանչյուր խմբի դեկավարի, և այնուհետև տվյալներ մուտքագրող խմբի դեկավարի կողմից: Հարցման արդյունքները նշակվել են SPSS ծրագրով և վերստին ստուգվել յուրաքանչյուր հարցաթերթի տվյալների առումով:

10 հարցերի պատասխանների համադրումն ըստ 5 ժողովրդագրական (սեռ, տարիք, կրթություն, եկամուտ և գրաղվածություն) և 2 այլ (բնակավայրի տեսակ և վարչատարածքային միավոր) խմբերի ներկայացված է 3-ական 3-9-ում: 3-ական 10-ում բերված են հարցվողների կողմից վերջին երեք տարվա ընթացքում կատարված ոչ պաշտոնական վճարումների տվյալները:

Ներկայացված պատասխանների տոկոսային գումարը ոչ միշտ է հավասար 100%-ի, ինչը պայմանավորված է թվերի կլորացմանք մեկ տասնորդականի ճշտությամբ: Պատկերներում և աղյուսակներում ոչ միշտ են ներկայացված 3.0%-ին չհասնող պատասխանները: 3 առաջնահերթ պատասխան ակնկալող հարցերի համար հավելվածներուն ներկայացված են միայն առաջին հերթին ընտրված տարբերակները:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հարցաթերթ

- 1. Բնորոշեք, խնդրեմ, կոռուպցիան /ընտրեք մեկ պատասխան/:**

[1.] Հանցագործություն [2.] Անբարոյականություն [3.] Ընդունված ավանդույթ  
[4.] Ազգային մտածելակերպ [5.] Այլ \_\_\_\_\_ [0.] Ղծվարանում եմ պատասխանել

**2. Ձեր կարծիքով, կոռուպցիան հիմնախնդի՞ր (պրոբլեմ) է Հայաստանում:**

[1.] Հիմնախնդիր չէ [2.] Մասամբ հիմնախնդիր է [3.] Հիմնախնդիր է  
[4.] Մեծ հիմնախնդիր է [0.] Ղծվարանում եմ պատասխանել

**3. Երբվանի՞ց է կոռուպցիան տարածվել հայ հասարակությունում:**

[1.] Մինչև Սովետական կարգերի հաստատումը [2.] Սովետական կարգերի հաստատումից հետո  
[3.] Անկախության ձեռքբերումից հետո [4.] Միշտ էլ եղել է  
[5.] Այլ \_\_\_\_\_ [0.] Ղծվարանում եմ պատասխանել

**4. Ինչպե՞ս է Հայաստանում փոխվել կոռուպցիայի մակարդակը վերջին երեք տարվա ընթացքում:**

[1.] Զգալիորեն նվազել է [2.] Նվազել է [3.] Չի փոխվել  
[4.] Աճել է [5.] Զգալիորեն աճել է [0.] Ղծվարանում եմ պատասխանել

**5. Նշված օրինակներից որո՞նք եք Դուք համարում կոռուպցիայի դրսնորում /1- այն, 2 - ոչ, 0- դժվարանում եմ պատասխանել/:**

1. Կաշառք տալը (1) (2) (0)  
2. Կաշառք ստանալը (1) (2) (0)  
3. Կաշառք տալուն և ստանալուն միջնորդելը (1) (2) (0)  
4. Ընկերական/բարեկամական կապեր օգտագործելը (1) (2) (0)  
5. Փոխադարձ «լավություն» անելը (1) (2) (0)  
6. Տեղեկատվություն քողարկելը /կամայական օգտագործելը (1) (2) (0)  
7. Պետական միջոցները սեփական շահերի համար օգտագործելը (մեքենաներ, առանձնատներ և այլն) (1) (2) (0)  
8. Տնտեսական մենաշնորհ և այլ արտոնություններ տրամադրելը (1) (2) (0)  
9. Ազդեցություն գործադրելը /շահագրգիռ միջամտությունը այլ հաստատությունների գործունեությանը (1) (2) (0)  
10. Այլ \_\_\_\_\_

**6. Ովքե՞ր են Հայաստանում նպաստում կոռուպցիայի տարածմանը /ընտրեք 3 առավել համապատասխան օրինակներ/:**

1. Անհատ քաղաքացիները  
2. Պետական պաշտոնյաները  
3. Գործարարները  
4. Կուսակցությունները  
5. Հասարակական կազմակերպությունները  
6. Միջազգային կազմակերպությունները  
7. Այլ \_\_\_\_\_

**7. Հայաստանում պետական ո՞ր մակարդակում է կոռուպցիան ավելի լայն տարածված /ընտրեք մեկ պատասխան/:**

1. Բարձր մակարդակում (նախագահ, վարչապետ, նախարար, փոխնախարար, մառայետ, ԱԺ ապահնամարտ)

2. Միջին մակարդակում (ստորաբաժանումների ղեկավարներ, ՏԻՄ ղեկավարներ)
3. Ցածր մակարդակում (շարքային ծառայողներ)
4. Բոլոր մակարդակներում
- 8. Ինչպե՞ս կգնահատեիք կոռուպցիայի տարածվածության աստիճանը հետևյալ պետական կառույցներում /1 – կոռումպացված չէ, 2 – մասամբ կոռումպացված է, 3 – կոռումպացված է, 4 – շատ կոռումպացված է, 0 – դժվարանում են պատասխանել/:**

	Կառույցներ	Գնահատական				
		(1)	(2)	(3)	(4)	(0)
1.	ՀՀ նախագահ					
2.	ՀՀ նախագահի աշխատակազմ					
3.	ՀՀ վարչապետ					
4.	ՀՀ կառավարության աշխատակազմ					
5.	ՀՀ նախարարներ					
6.	ՀՀ նախարարությունների աշխատակիցներ					
7.	ՀՀ կառավարության առընթեր մարմիններ (արտակարգ իրավիճակների վարչություն, միգրացիայի և փախատականների վարչություն, պետական գույքի կառավարման վարչություն, քաղացիական ավիացիայի գլխավոր վարչություն, ֆիզիկական կուլտուրայի պետական կոմիտե և այլն)					
8.	Մարզպետարաններ					
9.	Երևանի քաղաքապետարան					
10.	Տեղական ինքնակառավարման մարմիններ (քաղաքապետարաններ, քաղապետարաններ, գյուղապետարաններ)					
11.	ՀՀ Կենտրոնական բանկ					
12.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ					
13.	ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ					
14.	Մշտական գործող հանձնաժողովներ և խորհուրդներ (տնտեսական մրցակցության պաշտպանության, հանրային ծառայությունները կարգավորող, հեռուստատեսության և ռադիոյի, քաղաքացիական ծառայության և այլ)					
15.	ՀՀ Սահմանադրական դատարան					
16.	ՀՀ արդարադատության խորհուրդ					
17.	Վճռաբեկ դատարան					
18.	Վերաքննիչ դատարաններ					
19.	Առաջին ատյանի դատարաններ					
20.	Տնտեսական դատարան					
21.	ՀՀ դատախազություն					
22.	Մարդու իրավունքների պաշտպան					
23.	Այլ _____					
	Ընտրեք 3 առավել կոռումպացված կառույցներ	I.	_____	II.	_____	III.

**9. Ինչպե՞ս կգնահատեիք Հայաստանում հետևյալ ոլորտներում/ծառայություններում կոռուպցիայի տարածվածության աստիճանը /1 – կոռումպացված չէ, 2 – մասամբ կոռումպացված է, 3 – կոռումպացված է, 4 – շատ կոռումպացված է, 0 – դժվարանում եմ պատասխանել/:**

	<b>Ոլորտ/ծառայություն</b>	<b>Գնահատական</b>				
		(1)	(2)	(3)	(4)	(0)
1.	Առողջապահություն (պոլիկլինիկա, հիվանդանոց և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
2.	Կրթություն (մանկապարտեզ, դպրոց, բուհ և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
3.	Պետական ռեգիստր (մասնավոր ծերնարկությունների և հասարակական կազմակերպությունների գրանցում և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
4.	Դատական ակտերի հարկադիր կատարում (դատարանի որոշումները կատարող գրասենյակներ)	(1)	(2)	(3)	(4)	(0)
5.	Ռւեդիչ հիմնարկներ (բանտեր, գաղութներ և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
6.	Պետական գնումներ (պետության կողմից գույքի և այլ սարանքների ու ծառայությունների ծեղբերում)	(1)	(2)	(3)	(4)	(0)
7.	Ընտրական համակարգ (ընտրական հանձնաժողովների աշխատանքը, օրինակ, ընտրացուցակների ու քվեաթերթիկների հետ, կուսակցությունների և թեկնածուների քարոզարշավները և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
8.	Ազգային անվտանգություն	(1)	(2)	(3)	(4)	(0)
9.	Պաշտպանության համակարգ /բանակ/	(1)	(2)	(3)	(4)	(0)
10.	Մաքսային ծառայություն	(1)	(2)	(3)	(4)	(0)
11.	Հարկային ծառայություն	(1)	(2)	(3)	(4)	(0)
12.	Լիցենզավորում և հավատարմագրում	(1)	(2)	(3)	(4)	(0)
13.	Պետական պատութեաչություն	(1)	(2)	(3)	(4)	(0)
14.	Ոստիկանություն /բացառությամբ պետական պատութեաչության/	(1)	(2)	(3)	(4)	(0)
15.	Անշարժ գույքի պետական կադաստր	(1)	(2)	(3)	(4)	(0)
16.	Նոտարական ծառայություն	(1)	(2)	(3)	(4)	(0)
17.	Պետական գույքի սեփականաշնորհում	(1)	(2)	(3)	(4)	(0)
18.	Բանկային համակարգ	(1)	(2)	(3)	(4)	(0)
19.	Սոցիալական ապահովություն (թոշակներ, նպաստեր և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
20.	Կապ (հեռախոս, ինտերնետ և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
21.	Տրանսպորտ (ցանաքային, օդային և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
22.	Հանրային ծառայություններ (ջուր, գազ, էլեկտրաէներգիա)	(1)	(2)	(3)	(4)	(0)
23.	Համայնքային ծառայություններ (աղբահանություն, քույլտվությունների տրամադրում և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
24.	Քաղաքաշինություն (հողահատկացում, շինարարություն և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
25.	Շրջակա միջավայրի (օդի, ջրի, անտառների և այլ բուսական ու կենդանական աշխարհի) պահպանություն	(1)	(2)	(3)	(4)	(0)
26.	Գյուղատնտեսություն (ոռոգում, պարարտանյութերի և սերմացուի տրամադրում)	(1)	(2)	(3)	(4)	(0)
27.	Գործարար ոլորտ /բիզնես/	(1)	(2)	(3)	(4)	(0)
28.	Լրատվյուն (հեռուստաընկերություններ, թերթեր և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
29.	Կուսակցություններ	(1)	(2)	(3)	(4)	(0)

30.	Հասարակական կազմակերպություններ	(1)	(2)	(3)	(4)	(0)
31.	Բարեգործական կազմակերպություններ	(1)	(2)	(3)	(4)	(0)
32.	Միջազգային կազմակերպություններ, դեսպանատներ	(1)	(2)	(3)	(4)	(0)
33.	Եկեղեցի	(1)	(2)	(3)	(4)	(0)
34.	Մշակույթ (հուշարձանների պահպանություն և այլն)	(1)	(2)	(3)	(4)	(0)
35.	Սպորտ	(1)	(2)	(3)	(4)	(0)
36.	Այլ _____	(1)	(2)	(3)	(4)	(0)
	Ընտրեք 3 առավել կոռումպացված ոլորտները/ծառայությունները	i. ii. iii.				

**10. Վերջին երեք տարվա ընթացքում Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները «ոչ պաշտոնական վճարումներ» կատարել ե՞ք վերընշված կամ այլ կառույցների, ոլորտների կամ ծառայությունների ներկայացուցիչներին նվերների, դրամի կամ այլ տեսքով:**

[1.] Այո

[2.] Ոչ

[99.] Քրաժարվում եմ պատասխանել

**10.1. Եթե այո, ապա խնդրում ենք նշել այդ ոլորտը, վճարի տարեթիվը, հաճախականությունը և գումարը /99-իրաժարվում եմ պատասխանել և 0-դժվարանում եմ պատասխանել/:**

Կառույց/Ոլորտ/Ծառայություն	Տարեթիվ	Քանի անգամ	Գումարային արժեքը

**11. Նշված օրինակներից որո՞նք եք Դուք համարում Յայաստանում կոռուպցիայի պատճառ /1-այո, 2-ոչ, 0-դժվարանում եմ պատասխանել/:**

- Քաղաքական կամքի բացակայություն (1) (2) (0)
- Կլանային շահերի գերակայությունը պետականի նկատմամբ (1) (2) (0)
- Պետության կողմից անօրինական միջամտություն ոչ պետական ոլորտներում (1) (2) (0)
- Անկատար օրենսդրություն, ենթաօրենսդրական ակտեր և այլն (1) (2) (0)
- Օրենքների թերի կիրառում (1) (2) (0)
- Անարդյունավետ վարչարարություն (1) (2) (0)
- Արդարադատության համակարգի անկախության բացակայություն (1) (2) (0)
- Անկատար վերահսկողական մեխանիզմներ և պատժամիջոցներ (1) (2) (0)
- Պետական հատվածում թափանցիկության և հաշվետվողականության պակաս (1) (2) (0)
- Տեղեկատվության մատչելիության սահմանափակում (1) (2) (0)
- Անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ  
(ցածր աշխատավարձեր, թոշակներ և այլն) (1) (2) (0)
